Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը

ք.Հրազդան 23.01.2020թ. ժամը 14.[00]

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

Ռ.Խաչատրյան-ՀՀ Կոտայքի մարզի դատախազ
Ս.Քոչարյան-ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ, գնդապետ
Ա.Բաղրամյան-ՀՀ Կոտայքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ
Ա.Ամիրջանյան-ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ
Ա.Պետրոսյան-ՀՀ ոստիկանության ճանապարհային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության փոխգնդապետ
Մ.Վանոյան-ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի պետ
Վ.Դանիելյան-ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի պետ
Դ.Ղազարյան-ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի պետ
Պ.Ցուգունյան-<<Կոտայք>> ՋՕԸ գործադիր տնօրեն

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

-Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
-Ա.Բարսեղյան- ՀՀ Կոտայքի մարզպետի խորհրդական
-Գ.Առուստամյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
-Ա.Պապյան- ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
-Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
-Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
-Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. 2019թ. ընթացքում Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյան,

հարակից զեկուցողներ՝

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան,

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գույան/

2. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ավետիսյան/

3. Ջորակոչի և զորահավաքների կազմակերպման և անցկացման վիճակը Կոտայքի մարզում:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Ա.Բաղրամյան/

4. Ոռոգման ջրի մատակարարմանը և վարձավճարների գանձմանն առնչվող հարցեր:

/զեկուցող՝ <<Կոտայք>> ՋՕԸ գործադիր տնօրեն Պ.Ցուգունյան/

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանի հաշվետվությունը 2019թ. ընթացքում Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված աշխատանքների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

1.1 ՀՀ Կոտայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի հարակից զեկույցը մարզի համայնքներում 2019թ. իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ուսումնասիրությունների արդյունքների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

1.2 ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գուլյանի հարակից զեկույցը մարզի համայնքներում 2019թ. սեփական եկամուտների հավաքագրման արդյունքների մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Ողջունելով բոլոր ներկաներին Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը նշեց, որ 2019 թվականը Կոտայքի մարզում հիրավի բեկումնային տարի էր՝ լի տարաբնույթ մասշտաբային ծրագրերի մեկնարկով ու իրագործումով, որոնք միտված են մեր բնակչի կյանքի որակի բարձրացմանն ու նույն այդ բնակչի վերափոխմանը ՀՀ իրավատեր ու իրավագիտակից քաղաքացու:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել համապատասխան միջոցներ իրավական և մասնագիտական հսկողության ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու, ինչպես նաև դրանք հետագայում բացառելու ուղղությամբ:

-Ձեռնարկել գործուն քայլեր սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը բարելավելու ուղղությամբ, ինչպես նաև վերանայել 2020թ. բյուջեի եկամտային մասը, մասնավորապես սեփական եկամուտների պլանավորումը և ներկայացնել որոշ համայնքներում արձանագրված պլանային ցուցանիշների նվազեցման հիմնավորումները:

-Ճշտել խոշոր ապառքատերերի ցուցակները, համապատասխան աշխատանքներ տանել ապառքները հավաքագրելու ուղղությամբ, օրենքով սահմանված կարգով քայլեր ձեռնարկել հարկատուների նկատմամբ ապառքների գծով մարումներն իրականացնելու ուղղությամբ:

2. ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Ա.Ավետիսյանի զեկույցը մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-2020թ. մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերը պատշաճ կազմակերպելու նպատակով ձեռնարկել քայլեր նախորդ տարվա ընթացքում ի հայտ եկած խնդիրները բացառելու ուղղությամբ, մասնավորապես խիստ կարևորել.

* ներկայացվող ծրագրերի ճիշտ պլանավորման և ակնկալվող ֆինանսական միջոցների համապատասխանության ապահովումը,

* ծրագրերի ներկայացման՝ կարգով հաստատված ժամկետների պահպանումը,

* խիստ վերահսկողության սահմանումը նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և շինարարական աշխատանքների իրականացման նկատմամբ:

3. ՀՀ Կոտայքի մարզի զինվորական կոմիսար, գնդապետ Ա.Բաղրամյանի զեկույցը Կոտայքի մարզում զորակոչի և զորահավաքների կազմակերպման և անցկացման վիճակի մասին:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

Ընդգծելով համայնքների ղեկավարների ակտիվ մասնակցությունը 2019թ. անցկացված զորավարժանքներին՝ առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Գործուն օժանդակություն ցուցաբերել զինկոմիսարիատների կողմից տարվող կցագրման աշխատանքներին:

4. <<Կոտայք>> ՋՕԸ գործադիր տնօրեն Պ.Ցուգունյանի զեկույցը ոռոգման ջրի մատակարարմանը և վարձավճարների գանձմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Զեկույցն ընդունվեց ի գիտություն:

Ներկայացնելով 2019թ. կատարած, ինչպես նաև 2020թ. նախատեսված աշխատանքները, առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Կնքել Ջրային կոմիտեի կողմից մշակված նոր պայմանագրերը:

-Վճռական միջոցներ ձեռնարկել բնակիչներից ոռոգման ջրի դիմաց վարձավճարները հավաքագրելու ուղղությամբ:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը մարզպետ Ռ.Պետրոսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝ շարունակել համատեղ արդյունավետ աշխատանքը՝ կյանքի կոչելու համար 2019-ին մեկնարկած բոլոր ձեռնարկները, նախաձեռնելու է՛լ ավելի մասշտաբային ու հավակնոտ ծրագրեր և այդ ամենը հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն Կոտայքի մարզի և նրա արժանապատիվ Քաղաքացու:

Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019թ. ընթացքում Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված աշխատանքների մասին հաշվետվություն

ՀՀ Կոտայքի մարզի խորհրդի հարգելի՛ անդամներ՝ համայնքների ու բնակավայրերի վարչական ղեկավարներ,
Պարոնայք սպաներ, հարգելի՛ գործընկերներ և հրավիրյալներ, ողջունում եմ ձեզ Կոտայքի մարզի խորհրդի 2020 թվականի անդրանիկ նիստին.
2019 թվականը Կոտայքի մարզում դարձավ հիրավի բեկումնային տարի՝ լի տարաբնույթ մասշտաբային ծրագրերի մեկնարկով ու իրագործումով, որոնք գլոբալ առումով՝ նախևառաջ միտված են մեր բնակչի կյանքի որակի բարձրացմանն ու նույն այդ բնակչի՝ վերափոխմանը ՀՀ իրավատեր ու իրավագիտակից քաղաքացու:

2019 թվականի ընթացքում մեր մարզում Կառավարության սուբվենցիոն ծրագրերով մենք մեկնարկեցինք միանգամից 10 մանկապարտեզների կառուցում և հիմնակառուցում, որից միայն երեքը կառուցում ենք հիմքից, ինչպես նաև հինգ մշակույթի տների ու արվեստի դպրոցների վերակառուցում ու հիմնանորոգում: Առանձին ծրագրերով չորս տարբեր համայնքներում հիմնվեցին երկու մոբիլ մանկապարտեզներ և ևս երկու նախակրթարաններ: Սակայն, առանձնահատուկ կերպով ուզում եմ շեշտել տարածքային զարգացման կոնտեքստում, մեր համայնքներում սուբվենցիոն ծրագրերի իրագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված մեր ջանքը, ինչը բխում է նաև ՀՀ վարչապետի և մեր կառավարության կողմից իրականացվող տարածքային կառավարման քաղաքականությունից:

Հարկ եմ համարում նշելու, որ մենք խթանում ենք նաև պետական կառավարում, տեղական ինքնակառավարում և մասնավոր նախաձեռնություններ, հիմնադրամներ և մեկենասներ եռակողմ համագործակցության ձևաչափի կիրառումը մեր մարզում:

Եվ այսպես, Սմարթ հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում այս պահին Աբովյան քաղաքում կառուցվում է մարզում նմանը չունեցող Լոֆթ ոճի հանրային գրադարան՝ որպես սոցիալական ու կրթական ծրագրերի իրականացման հանրային հարթակ:
Ինչպես նաև բարձրլեռնային Զովաշեն համայնքում արդեն շահագործման ենք հանձնել նմանը չունեցող համայնքային կենտրոնը, որը լավագույն օրինակն է տարածքային կառավարում, տեղեկան ինքնակառավարում և մեկենասներ եռակողմ համագործակցության, որի արդյունքում, դպրոց չունեցող մեր միակ համայնքում այս պահին գործում է լիովին վերակառուցված ու ջեռուցվող մի կենտրեն, որտեղ համայնքի բացառապես բոլոր տարիքային խմբերի համար գործում են սոցիալականացման և կրթական ծառայություններ՝ բացառապես անվճար հիմունքներով ՏԻՄ միջոցների հաշվին:

Սա է մեր նախանշած ուղին՝ ռազմավարական պլանավորման առումով. մենք խնդիր ենք դրել մեր առջև ամենակարճ ժամկետներում մեր մարզի բացառապես բոլոր համայնքներում ունենալու բարեկարգ ու գունավոր մանկապարտեզներ՝ որպես նախադպրոցական կրթության հաստատություններ, արվեստի դպրոցներ, գրադարաններ ու մշակույթի տներ՝ որպես արտադպրոցական դաստիարակության հաստատություններ, և վերջապես՝ բարեկարգ, լիարժեք կահավորված և ջեռուցվող հանրակրթական դպրոցներ՝ որպես մրցունակ հասարակություն ունենալու թիվ մեկ նախադրյալ:
Ի դեպ, գրադարանների մասին. եթե 2019-ը Կոտայքի մարզում մեզ համար որպես առաջնահերթություն նախանշել էինք համայնքներն առավելագույնս ապահովել

նախադպրոցական կրթական հաստատություններով, ապա 2020-ը հայտարարել ենք Կոտայքի համայնքներում գրադարանների, արվեստի ու մշակույթի տների ստեղծման տարի:

Բնակչին ՀՀ քաղաքացու վերափոխելու դժվարին, բայց շնորհակալ ճանապարհը անցնում է հենց այս մանկապարտեզներով, գրադարաններով, մշակույթի ու արվեստի տներով:
Էտալոնային Կոտայք կերտելու համար մենք 7/24 ռեժիմով՝ օրենքով մեզ վերապահված լիազորությունների շրջանակում իրականացնում ենք հանրակրթության, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտների կառավարումն ու զարգացումը, ինչպես նաև՝ վարչական վերահսկողություն ենք իրականացնում ՏԻՄ-երի՝ սեփական և պատվիրակված լիազորությունների նկատմամբ:

Հարգելի՛ գործընկերներ, բնականաբար, մենք չենք աղաղակում, որ մեզ հաջողվել է 100 տոկոսով հաղթահարել մեր առջև ծառացած մարտահրավերներն ու խնդիրները, մենք պարզապես լուռ մեր գործն ենք անում, գործ, որը ունի միմիայն մեկ միասնական հավատամք՝ այն է կայացած պետական ինստիտուտներ և իրավագիտակից Քաղաքացիական հասարակություն: Եվ հենց պետականության ամրացմանն ու քաղաքացիակենտրոն կառավարմանն են հետայսու ևս միտված լինելու մեր բոլոր ջանքերը:

Այժմ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում 2019 թվականին ՀՀ Կոտայքի մարզպետարանի կատարած հիմնական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը՝ ըստ աշխատակազմի գործառութային ոլորտների:

---

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տարածքը կազմում է 2086 կմ^2, որը կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7%-ը: Համայնքների թիվը 42 է, որից 6-ը խոշորացված:

2019 թվականի փետրվարի 17-ին կազմակերպվել և անցկացվել է Քաղսի համայնքի ղեկավարի հերթական և Նոր Գեղի համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություններ: 2019 թվականի հունիսի 9-ին կազմակերպվել և անցկացվել է Աբովյան, Գետարգել համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ: 2019 թվականի դեկտեմբերի 8-ին կազմակերպվել և անցկացվել է Ողջաբերդ համայնքի ղեկավարի հերթական ընտրություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն մարզի համայնքներում 2019 թվականի ընթացքում կայացվել է ավագանու՝ 2503, համայնքի ղեկավարի՝ 14250 որոշում:

Մարզի համայնքներում 2019 թվականին գործունեություն են իրականացրել 1929 առևտրի, 315 հանրային սննդի, 413 կենցաղային ծառայության օբյեկտներ: 2019 թվականի ընթացքում ստուգումներ են կատարվել 851 առևտրի, 145 հանրային սննդի, 83 կենցաղային ծառայության օբյեկտներում: 2019 թվականին ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը համայնքների ղեկավարների մոտ կազմում է 10002, համայնքների ավագանու անդամների մոտ՝ 435, իսկ ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը համապատասխանաբար կազմում է՝ 9642 և 429:

2. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2019 թվականին համայնքների ղեկավարների կողմից մարզպետարան է իրազեկվել 1130 շինարարության թույլտվություն, նախորդ տարվա 692-ի համեմատ, որոնցից՝ 646-ը բնակելի տան, 179-ը հասարակական և արտադրական, իսկ 305-ը օժանդակ(19 քանդման

թույտվություններ), 181 ավարտական ակտեր, որոնցից՝ 102-ը բնակելի տան, 59-ը հասարակական և արտադրական, իսկ 20-ը օժանդակ:

Մարզի 32 համայնքներում սուբվենցիոն ծրագրերով իրականացվում է 52 շինարարական աշխատանքներ՝ շուրջ 2 մլրդ դրամ պայմանագրային արժեքով, որոնցից մեկի (Արզնի մշակույթի տուն) պայմանագիրը լուծարված է և ևս մեկը (Զովքի խորքային հոր) հանվել է ծրագրից, ինը ծրագրերի (Զարենցավանի ասֆալտապատում, Գողթի, Արամուսի, Գեղաշենի և Վերին Պտղնիի մանկապարտեզների կառուցում, Ծաղկաձոր համայնքի երեք ծրագրեր, Նոր Հաճնի մարզադահլիճի վերակառուցում) իրականացումը, ելնելով աշխատանքների ծավալներից, եղանակային և պայմանագրային պայմաններից 2020 թվական տեղափոխելու առաջարկով դիմել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, իսկ մնացած աշխատանքները գտնվում են կատարման տարբեր փուլերում, 23 ծրագրեր արդեն իսկ ունեն ընդունող հանձնաժողովների ավարտական ակտեր:

2019 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են ՀՀ Կոտայքի մարզի Գետարգել և Նոր Երզնկա համայնքների նոր թաղամասերի, ինչպես նաև Ակունք համայնքի Սևաբերդ բնակավայրի գազիֆիկացման աշխատանքները:

Կամարիս, Նոր Արտամետ և Քանաքեռավան համայնքներում իրականացվել են փողոցների արտաքին լուսավորության ցանցի անցկացման և վերականգնման աշխատանքներ:

Մարզի 5 համայնքներում(Կամարիս, Հատիս, Գեղաշեն, Զովունի և Ձորաղբյուր) իրականացվել են խմելու ջրի ջրագծերի կառուցման և հիմնանորոգման, 2(Նոր Գյուղ և Նոր Գեղի) համայնքներում՝ կոյուղու արտաքին ցանցի կառուցման աշխատանքներ, 2 համայնքներում՝ խմելու և ոռոգման ջրի խորքային հորերի հորատման աշխատանքներ:

2019 թվականին մարզի 14 համայնքների կողմից համայնքային բյուջեների միջոցներով իրականացվել են 287 մլն. 206 հազար դրամի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

21 համայնքների կողմից իրականացվել են 129 մլն. 520 հազ. դրամի փողոցային լուսավորության աշխատանքներ:

Հրազդան համայնքի կողմից իրականացվել են 18 մլն.673 հազ. դրամի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման աշխատանքներ:

2019 թվականին սուբվենցիոն ծրագրերով մարզի Բալահովիտ, Բյուրեղավան, Առինջ, Ակունք, Թեղենիք, Նոր Երզնկա, Սոլակ, Արզնի, Արգել, Ծաղկաձոր, Մրգաշեն, Պտղնի, Գետամեջ, Նոր Արտամետ համայնքներում իրականացվել են ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ:

2019 թվականին հետևողական աշխատանքների արդյունքում թվով 34 ԱԳԼՃԿ-ներից 33-ում հասարակական զուգարաններն արդիականացվել և բերվել են հասարակական զուգարանների նկատմամբ՝ ուղեցույցում նշված պահանջներին համապատասխան վիճակի:

3. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են 31679 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Մարզի հողային հաշվեկշիռը հետևյալն է՝ գյուղ. նշանակության հողեր՝ 154622.1 հեկտար, այդ թվում՝ վարելահողեր՝ 37708.4 հեկտար, բազմամյա տնկարկներ՝ 2779.6 հեկտար, խոտհարք՝ 11257.0 հեկտար, արոտներ՝ 78922.0 հեկտար, այլ հողտեսքեր՝ 23843.1 հեկտար: 2019թ. բերքի տակ կատարվել է 14895 հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք այդ թվում հացահատիկային մշակաբույսեր 10611 հա /աշնանացան- 4006 հա, գարնանացան- 6605 հա/, հատիկաընդեղեն՝ 228 հա, կարտոֆիլ՝ 641 հա, բանջարեղեն՝ 918 հա, տեխնիկական մշակաբույսեր՝ 63 հա և կերային մշակաբույսեր՝ 2404հա, ծաղիկ 30 հա:

Ընթացիկ տարում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը կազմել է՝

հացահատիկ և ընդեղեն - 14680 տոննա,

կարտոֆիլ - 12007 տոննա,

բանջարեղեն - 12506 տոննա,

պտուղ և հատապտուղ– 14945 տոննա,

խաղող- 146 տոննա,

կուտակվել է խոտ – 24436 տոննա,

կուտակվել է ծղոտ - 6000 տոննա:

2020 թվականի բերքի տակ կատարվել է 3500 հա աշնանացան հացահատիկի ցանք, ջերմատներում և ջերմոցներում արտադրվել է՝ բանջարեղեն 2106 տոննա, ծաղիկ 19719350 հատ:

Մարզում դրական տեղաշարժերից առանձապես կարևորվում է փակ գրունտի բանջարեղենի և հատապտղի արտադրության ավելացումը, ջերմոցների տարածքը 2019 թվականին կազմել է 91.54 հա, որից բանջարեղենի արտադրություն՝ 57.84 հա /Հրազդան, Ձորաղբյուր, Նոր Գեղի, Արամուս/, ծաղիկի արտադրություն՝ 20.5 հա /Գողթ, Մայակովսկի/, ելակի արտադրություն՝ 13.2 հա /Նոր Գեղի, Ակունք, Կամարիս/, պարբերական աճի միտում է նկատվում նաև տեխնիկական մշակաբույսերի (կտավիատ, ծխախոտ) ցանքերի նկատմամբ, որոնք 1 հա-ի հաշվով բարձր եկամուտ են ապահովում:

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի շուրջ 7.8%-ը /52.4 հազար գլուխ/ ոչխարների և այծերի՝ 5.8%-ը /37.8 հազար գլուխ/ և խոզերի՝ 10.1%-ը /24.1 հազար գլուխ/, 2019 թվականի հունվար- սեպտեմբեր ամիսներին իրացվել է՝

գյուղատնտեսական կենդանի և թռչուն սպանդի համար /կենդանի քաշով/ 7.7 հազար տոննա,

արտադրվել է կաթ 58.2 հազար տոննա,

արտադրվել է ձու 105.7 մլն. հատ:

2019թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից օգտվել են շուրջ 430 շահառու:

4. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորում են 34059 աշակերտներ, առաջին դասարան են հաճախում 3650 աշակերտներ:

2019 թվականին մարզպետի՝ ապրիլի 9-ի N81-Ա որոշմամբ ձևավորվել և հաստատվել են մարզի դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների նոր կազմերը, իսկ ընթացիկ ժամանակահարվածում կազմերում կատարվել են 40 փոփոխություններ՝ 19-ը ծնողական, 6-ը մանկավարժական, 8-ը վերադասի, 6-ը համայնքի և 1-ը՝ ՀՀԿԳՄՍ նախարարության, որոնք սահմանված կարգով հաստատվել են:

Մարզի 11 հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթություն են ստանում 200 աշակերտներ: Դպրոց ժամանակավոր չհաճախող 34 աշակերտների համար կազմակերպվել են տնային ուսուցում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առավել մատչելի միջավայր ստեղծելու նպատակով Չարենցավանի N6 դպրոցում կառուցվել են թեքահարթակներ, ինչպես նաև հարմարեցված սանհանգույցներ, Արամուսում վերանորոգվել և կահավորվել է ռեսուրս սենյակ:

Մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում լոկալ ջեռուցմամբ ապահովված են 90 դպրոցներից 75-ը, իսկ 15-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով: 2019 թվականից արդեն լոկալ ջեռուցմամբ ջեռուցվել են Նոր Արտամետի,

Արագյուղի միջնակարգ և Գառնի բանավանի հիմնական դպրոցները: Հաշվետու տարվա վերջին հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի արդիականացման նպատակով Կոտայքի մարզպետի որոշմամբ Ֆանտանի, Գետամեջի, Փյունիկի և Արտավազի միջնակարգ դպրոցներին հատկացվել է 5 մլն.-ական դրամ: Ներկա պահին ջեռուցման համակարգերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքները ավարտական փուլում են: 22 համայնքներում, ուր դեռևս չկան նախադպրոցական հաստատություններ, դպրոցներում գործում են նախակրթարաններ: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում 2019 թվականին նախակրթարաններ են հիմնվել Հրազդանի N7 և Կարենիսի միջնակարգ դպրոցներում: Նախակրթարանները ստացել են նոր գույք և արդեն գործում են:

Մարզի 90 ուսումնական հաստատություններից 85-ում իրականացվում է «Դպրոցական սնունդ» ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի «Պարենի համաշխարհային ծրագիր» համագործակցությամբ: Այս ծրագիր արդյունքում 15583 տարրական դասարանների աշակերտները և նախակրթարանի սաները ապահովված են ամենօրյա տաք սննդով: Բյուրեղավանի, Չարենցավանի N6 հիմնական և Քաղսիի միջնակարգ դպրոցների խոհանոցներն ամբողջությամբ նոր գույքով կահավորվել են ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրով:

Հաստատություններում իրականացվող ուսումնադաստիարակչական գործունեության և աշակերտների համար անվտանգ ու հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով ամբողջությամբ ցանկապատվել են Նոր Հաճնի N1, Եղվարդի N3, Բյուրեղավանի հիմնական և Բալահովիտի միջնակարգ դպրոցների բակերը:

Մարզպետարանի և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ համագործակցության արդյունքում՝ վաղ տարիքից ինժեներական կրթությունը հասանելի դարձնելու նպատակով մարզի 12 դպրոցներում ներդրվել է «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ:

<<Մարզական գույքով ապահովում>> ծրագրի շրջանակներում մարզի 46 ուսումնական հաստատություններ համալրվել են 7 անուն մարզագույքով: Հարկ ենք համարում նշել, որ շուրջ 20 տարի այս ծավալի մարզագույք դպրոցներին չէր տրամադրվել:

«Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվել են՝ Հովհաննես Թումանյանի 150- ամյակին նվիրված ասմունքի և հեքիաթասացության մարզային մրցույթ- փառատոն, Հայ ժողովրդական և հոգևոր-դասական երգի մարզային մրցույթ-փառատոն/ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին/, մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաների մրցույթ-փառատոն, գեղանկարչության մարզային ցուցահանդես՝ տարբեր սերունդներ ներկայացնող մարզի 26 գեղանկարիչների մասնակցությամբ:

«Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթում մարզի հավաքականը հանրապետությունում ճանաչվել է լավագույնը: «Լավագույն նախադպրոցական մարզական հաստատություն» մրցույթի եզրափակիչ փուլում Հրազդանի թիվ 9 մանկապարտեզը գրավել է 3-րդ տեղը:

Հայաստանի և Արցախի Հանրապետության 8-12-ր դասարանների աշակերտների սպարտակիադայի շրջանակներում անցկացվող հրաձգության մրցումներում մարզի հավաքականը զբաղեցրել է 2-րդ տեղը՝ զիջելով միայն Արցախի թիմին:

ՀՀ դպրոցականների սպարտակիադայի շրջանակում անցկացված շախմատի եզրափակիչ մրցաշարում մարզի հավաքականը գրավել է 2-րդ տեղը:

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ (ԱԲՈՎՅԱՆԻ, ՀՐԱԶԴԱՆԻ, ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ԵՎ ԵՂՎԱՐԴԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Կոտայքի մարզի առողջապահական համակարգում գործում են **40 բուժհաստատություններ,** որոնցից **5ը համայնքային** ենթակայության («Մեղրաձորի ԲԱ», «Լեռնանիստի ԲԱ», «Առինջի ԲԱ», «Բուժականի ԲԱ» ՀՈԱԿ-ներ և «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ) և **35-ը մարզպետարանի**. ընդհանուր **4** բժշկական կենտրոններ, **2** պոլիկլինիկա, **1** ծննդատուն, **1** մարզային արյան բանկ, **21** առողջության առաջնային պահպանման կենտրոն, **9** բուժ. ամբուլատորիա և **2** առողջության կենտրոն: Մարզի մահճակալային ֆոնդը կազմում է **253 մահճակալ**, իսկ **բժշկական հաստատություններում հաշվառված է շուրջ 264 000 բնակիչ**:

2019 թվականի ընթացքում առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ, մասնավորապես.

- 2019թ-ի ընթացքում տնտեսված սեփական միջոցների հաշվին վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Չարենցավանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում՝ տրամադրվող բժշկական ծառայությունները մեկ շենքում կենտրոնացնելու համար՝ պոլիկլինիկ մասնաշենքը հիվանդանոցային մաս տեղափոխելու միջոցով: Վերանորոգման և գույքով հագեցման նպատակով ծախսվել է մոտ 91 մլն. ՀՀ դրամ:
- <<Ռ.Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն տնտեսված միջոցների հաշվին, ձեռք է բերել աուդիոմետրիայի սարք և ֆիբրոգաստրոսկոպ՝ ընդհանուր շուրջ 8 մլն ՀՀ դրամ արժողությամբ:
- «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ –ի կողմից լիզինգային պայմանագրով ձեռք է բերվել ուլտրաձայնային և դոպլեր հետազոտման սարք՝ մոտ 11 մլն ՀՀ դրամ արժողությամբ:
- 2019թ-ի ընթացքում մարզի առողջապահական հաստատություններում գրանցվել է վճարովի ծառայությունների աճ . 2018թ-ի համեմատ շուրջ 157 մլն դրամի չափով, ընդհանուր շուրջ 642 մլն ՀՀ դրամ:
- Բժշկական հաստատությունների տնօրենների կողմից առկա ֆինանսական միջոցների շրջանակներում վերանայվել են նաև բժշկական հաստատություններում աշխատող բժշկական և այլ հաստիքային աշխատակիցների աշխատավարձերը:
- 2019թ-ին մարզպետարանի ենթակայության բժշկական հաստատություններում պետ. պատվերով իրականացված ծառայությունների ընդհանուր գումարը կազմել է շուրջ 3 մլրդ 574 մլն ՀՀ դրամ, իսկ մարզում գործող ուղեգրող հանձնաժողովների կողմից քաղաքացիներին տրամադրվել են 47 ուղեգրեր:
- ՀՀ ԱՆ հետ պայմանավորվածության արդյունքում Աբովյան և Հրազդան ԲԿ-ներին տրվել են լրացուցիչ ֆինանսավորում, ամռան ամիսներին ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին մայրուղու Երևան-Սևան հատվածի 3 հենակետերում շտապ բժշկական օգնության ծառայության լրացուցիչ հերթապահություններ սահմանելու համար, իսկ դեկտեմբերից նաև Ծաղկաձոր քաղաքի ճոպանուղու տարածքում առկա է ամենօրյա շտապ. օգնության հերթապահություն:
- 2019թ-ի դեկտեմբերի դրությամբ մարզպետարանի ենթակայության բուժ. հաստատություններից 26-ում առկա են տնօրենի թափուր հաստիքներ, որոնք նախատեսված է համալրել մինչև 2020թ-ի ավարտը, ինչպես նաևնախատեսվում է 2020թ-ի մարտ –ապրիլ ամիսներին մարզի բուժ. հաստատություններում կազմակերպել թափուր հաստիքների մրցույթներ՝ ընդհանուր շուրջ 50 միավոր:
- Ծննդօգնության ծառայություններ մատուցող առողջապահական հաստատություններում գրանցվել է 1 872 ծնունդ :
- 2019թ-ի ընթացքում մարզի առողջապահական 10 / Հրազդան ԲԿ, Աբովյանի ԲԿ, Գեղաշենի, Զովունիի, Մրգաշենի, Նոր Երզնկայի, Ակունքի , Քասախի ԱԱՊԿ, Նոր Հաճնի

պոլիկլինիկա ՊՓԲԸ և Արգելի ԱԿ / հաստատություններում մարզպետարանի կողմից իրականացվել է ներքին աուդիտ, որի արդյունքում 3 հաստատությունների տնօրենների նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ/ Հրազդան ԲԿ, Նոր Երզնկա ԱԱՊԿ – խիստ նկատողություն, Գեղաշենի ԱԱՊԿ –նկատողություն/:

2019թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 4 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում հաշվառվել են **11 270** ընտանիքներ, որից նպաստառու են **7 940** ընտանիքներ: Սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդների առաջարկությամբ տարվա ընթացքում հրատապ դրամական օգնություն է տրամադրվել **1 913** ընտանիքի, որոնց կարիքավորության միավորը ցածր է եղել 30 միավորից:

Նպաստառու ընտանիքների թվի հաշվարկով աղքատության մակարդակը մարզում կազմում է շուրջ 21%, սակայն վիճակագրական տվյալներով աղքատության մակարդակը հասնում է մինչև 31 %, որից ծայրահեղ աղքատ են համարվում 2.5 %:

Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրին մասնակցել են մարզի **8** համայնքներ, **35** շահառուներով: 2019թ. ծրագրի իրականացման համար նախատեսված էր շուրջ **12 մլն.դրամ:**

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման ծրագրին մասնակցել են մարզի **11** համայնքների **299** շահառուներ: 2019թ. ծրագրի իրականացման համար նախատեսված էր շուրջ **75** մլն. ՀՀ դրամ:

2019 թվականի աշնանը մարզի 4 սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները և զբաղվածության տարածքային 4 կենտրոնները համատեղ սկսեցի իրականացնել **<<Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցություն տրամադրելու>>** ծրագիրը: Աջակցություն է տրամադրվել 66 ընտանիքների՝ յուրաքանչյուրին **540** հազար դրամ , այդ թվում 55–ը նպաստառու ընտանիքներ են:

2019թվականին մարզում կազմակերպվել է 3 **<<Աշխատանքի տոնավաճ>>** միջոցառում, **85 գործատուների 330 թափուր աշխատատեղերի** հայտերով:

<<Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում>> ծրագրով մարզում գործում են 6 մանկապատանեկան ճամբարներ, որտեղ իրենց ամառային հանգիստն են անցկացրել զոհված ու վիրավոր ազատամարտիկների, աշխահազորայինների և կարիքավոր ընտանիքների **4680** երեխաներ՝ երեք հերթափոխով: Մարզին հատկացված էր **235** տեղ:

Կոտայքի մարզպետարանի այլ նպաստներ պետ.բյուջեից հոդվածով մարզպետի 88 որոշումներով մարզի **872** ընտանիքի տրամադրվել է ֆինանսական աջակցություն շուրջ 23 մլն 500 հազ. ՀՀ դրամ չափով:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի համար 2019թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել էր 637,239.3 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 624,029.5 հազար դրամ, որը կազմում է 97,9%, իսկ տնտեսված գումարը՝ 13,209.8 հազար դրամը գոյացել է աշխատավարձի, էներգետիկ ծառայություններ, կապի ծառայություններ և այլ հոդվածների տնտեսումներից:

Մարզպետարանի կարողությունների զարգացման ծրագրով 5931.2 հազար դրամից ծախսվել է 4511.4 հազար դրամ կամ փաստացի ծախսը կազմել է 76.06%: Խնայված 1419.8 հազար դրամը հետ է վերադարձվել պետական բյուջե:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման համար 2019թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 141,536.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 141.189.3 հազար դրամ, տնտեսումը կազմել է 346.7 հազար դրամ:

Մշակութային ծրագրերի գծով 2019թ. բյուջեով պլանավորվել էր 5,294.4 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 4,840.0 հազար դրամ, տնտեսումը կազմել է 454.4 հազար դրամ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային-փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսված 59,035.9 հազար դրամը ամբողջությամբ ծախսվել է:

Այլընտրանքային ծառայություններ հոդվածով նախատեսվել էր 2,400.0 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 2,313.1 հազար դրամ, տնտեսումը կազմել է 86.9 հազար դրամ:

2019 թվականին մարզի մի շարք դպրոցներում իրականացվել են ընթացիկ և կապիտալ վերանորոգումներ՝ դրամական արտահայտությամբ շուրջ 116.1 մլն դրամի չափով:

Կրթական ծրագրերի գծով 2019թ. ՀՀ պետական բյուջեից նախատեսվել էր 6,457,356.8 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 6,416,062.3 հազար դրամը, կամ տնտեսումը կազմել է 41,294.5 հազար դրամ:

Ըստ կրթական ծրագրերի այն ունի հետևյալ պատկերը՝

Հանրակրթական ծրագրերի գծով նախատեսված 6,087,057.4 հազար դրամից փաստացի ծախսվել է 6,056,184.2 հազար դրամ: Տնտեսվել է 30,873.2 հազար դրամ, որը առաջացել է ՀՀ կառավարության որոշմամբ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի 10% ավելացման վարահաշվարկի արդյունքում:

Հատուկ կրթություն ծրագրի գծով նախատեսված 118,550.5 հազար դրամից փաստացի ծախսվել է 116,495.7 հազար դրամ: Տնտեսումը կազմել է 2,054.8 հազար դրամ, որը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

Ներառական կրթություն ծրագրով 2019 թվականին նախատեսված 106,287.3 հազար դրամից ծախսվել է 98,872.6 հազար դրամ: Տնտեսվել է 7,414.7 հազար դրամ, որը առաջացել է սննդի վերահաշվարկի արդյունքում:

Նախադպրոցական կրթություն ծրագրով 2019 թվականին նախատեսված 75,129.5 հազար դրամից ծախսվել է 74,177.7 հազար դրամ: Տնտեսվել է 951.8 հազար դրամ, որը առաջացել է ՀՀ կառավարության որոշմամբ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի 10% ավելացման վարահաշվարկի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզպետի որոշմամբ թվով 1 դպրոցից (Հրազդանի թիվ2 հիմնական դպրոց, 5 երեխայի հաշվարկով – 174.0 հազար դրամ) պահված գումարի արդյունքում:

Մնացած բոլոր կրթական ծրագրերի գծով ֆինանսավորումը իրականացվել է ամբողջությամբ:

Արտադպրոցական դաստիարակության ծրագրով նախատեսված 70,332.1 հազար դրամը ծախսվել է ամբողջությամբ:

Տարվա կտրվածքով մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը վեց հարկատեսակների գծով 108,3 տոկոս:

7. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարվա փաստաթղթաշրջանառությունը կազմել է 32685 փաստաթուղթ, որից՝ 2591 դիմումներ քաղաքացիներից:

Մարզպետի մոտ կազմակերպված ընդունելություններին մասնակցել են 196 քաղաքացի:

ՀՀ Տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է հողի հարկի և գույքահարկի 82000 անդորրագիր ստանալու հայտ: Ստացվել և բաշխվել է 70200 անդորրագիր:

Հանդիսանալով Կոտայքի մարզպետարանի կարիքների համար բյուջետային հատկացումների հաշվին իրականացվող գնումների համակարգող՝ իրականացվել են համապատասխան գործառույթներ. կազմվել և հաստատվել են գնման հայտերը, որոնք ներառում են գնման առարկայի բնութագրերը, մասնավորապես կազմվել է ԳՀ գնման ընթացակարգի 8 և ԷԱՃ ընթացակարգի 2 հրավեր: Մասնակցել ենք մարզպետարանի ակտիվների գույքագրման և

մարզպետարանի ենթակայության հիմնարկների լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրման աշխատանքներին:

Աջակցություն է ցույց տրվել ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիներին սահմանված նմուշի համապատասխան դիմումների լրացման, անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ներկայացնելու հարցերում: ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայությունից ստացված ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների դիմումների վերաբերյալ 15 պատասխանների մասին իրազեկել ենք դիմումատուներին: Աջակցություն է ցույց տրվել ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիներին սահմանված նմուշի համապատասխան դիմումների լրացման, անհրաժեշտ փաստաթղթերը ճիշտ ներկայացնելու հարցերում:

8. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2019 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի կողմից ստուգանշվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 325 որոշումներ, 249 կարգադրություններ, գլխավոր քարտուղարի 562 հրամաններ:

Ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 42 համայնքների ավագանիների թվով 2503 որոշումներ, համայնքներիի ղեկավարների՝ 14250 որոշումներ, արձանագրված թերությունների վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու վերաբերյալ:

9. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ՀՀ Կոտայքի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունից բխող 2019թ. գործունեության ծրագրի մոնիթորինգի տարեկան հաշվետվության կազմման, ինչպես նաև 2020 թվականի գործունեության ծրագրի մշակման աշխատանքներ. համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվելու են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Արտաքին կապերի ոլորտում մարզի համայնքների և այլ երկրների մարզերի ու համայնքների միջև համագործակցության հաստատման, զարգացման ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ, պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն են ներկայացվել համապատասխան հաշվետվություններ:

Կազմակերպվել են մարզում 2019-2025թթ. Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարության հանրային խորհրդատվությունների անցկացման աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մարզի զբոսաշրջային ներուժի, առկա տարածքների վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծական աշխատանքներ: Կազմվել են մարզի թիրախային համայնքների զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք ներկայացվել են ՀՀ էկոնմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե:

Օգոստոսի 17-ին Ծաղկաձորում կազմակերպվել է «Իմ քայլը հանուն Կոտայքի մարզի» ներդրումային համաժողովը, որի նպատակն էր համախմբել պետական և մասնավոր հատվածին, ակտիվացնել ներդրումային միջավայրը մարզում, հաստատել նոր փոխշահավետ գործակցային կապեր գործարար ոլորտում, մարզի տնտեսության և համայնքների զարգացման գործընթացներին ներգրավել Հայաստանում և արտերկրում իրենց գործունեությունն իրականացնող գործարարների: Համաժողովին զուգահեռ անցկացվեց տեղական արտադրանքի էքսպո-ցուցահանդես:

Ընդհանուր առմամբ բիզնես ֆորում ներկայացվեցին 25 ներդրումային ծրագրեր, 10 հաջողության պատմություններ:

10. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

2019թ. ընթացքում մարզի համայնքներում հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով իրավական և մասնագիտական վերահսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմում ընթացիկ ստուգումներ են իրականացվել մարզի 14 համայնքներում, որի արդյունքում Աբովյան, Արամուս, Թեղենիք, Մայակովսկի, Գառնի, Գեղադիր, Բյուրեղավան համայնքների ղեկավարները և Ջրվեժ համայնքի Զովք բնակավայրի վարչական ղեկավարը ենթարկվել են վարչական տույժերի:

ՀՀ կառավարության 23.07.2015թ. թիվ 828-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր չունեցող համայնքներից ստացվել են թվով 42 միավոր հողամասերի գործառնական նշանակության փոփոխության առաջարկություններ, որոնցից 42 էլ ստացել են մարզպետի համաձայնությունը և դրանց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք:

11. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության (ԸԿԵԻՊ) բաժնի մասնագետների, խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համագործակցության արդյունքում /իրազեկում, անհատական աշխատանք/ շարունակվել է առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող հաշվառումից դուրս մնացած երեխաների և անձանց հայտնաբերումը և հաշվառումը: Այս պահին Կոտայքի մարզի ԱԾԽՄ երեխաների և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 104 ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք, որոնցից հաշվետու տարում հաշվառվել են 3-ը, սահմանված տարիքը լրանալու և այլ /մահվան, կենսաբանական ընտանիք վերադառնալու/ պատճառներով հաշվառումից հանվել են 8-ը:

Համապատասխան շտեմարանում այժմ առկա են 65 ծնողազուրկ երեխաների և 39 ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց տվյալներ: ԱԾԽՄ 1 երեխա խնամվում է խնամատար ընտանիքում:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 4 երեխա, դուրս է գրվել 1 երեխա:

Այս պահին հաշվառման մեջ են գտնվում 42 իրավախախտ անչափահասներ:

12. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից ընդունվել են 325 որոշումներ, 249 կարգադրություններ, իսկ գլխավոր քարտուղարի կողմից՝ 562 հրամաններ:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2019 թվականի հաստիքացուցակում առկա են 137 հաստիքներ (պաշտոններ), որից 4-ը վարչական պաշտոններ են, 7-ը՝ հայեցողական պաշտոններ, 115-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ, 2-ը՝ քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոն և 9-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններ: Պաշտոնի են նշանակվել 8 անձ, որից 3-ը՝ հայեցողական, 2-ը քաղաքացիական աշխատանք կատարողի և 3-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններում: Պաշտոնից ազատվել են՝ 6 անձ, որից 1-ը՝ վարչական, 2-ը՝ հայեցողական և 3-ը՝ տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի պաշտոններից:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առկա են քաղաքացիական ծառայության 115 պաշտոններ, որից 26-ը թափուր են: Պաշտոններից ազատվել են 11 քաղաքացիական ծառայողներ՝ 7-ը անձնական դիմումի համաձայն, 3-ը քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու հիմքով (65 կամ 66 տարեկան) և 1-ը ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի հիմքով: Վերապատրաստվել են 42

քաղաքացիական ծառայողներ: Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կնքվել են 13 ժամկետային աշխատանքային պայմանագիր, լուծվել են՝ 7-ը:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են 8 առողջապահական բաժնետիրական ընկերություններ և 27 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպություններ: Թափուր են 5 առողջապահական բաժնետիրական ընկերության և 21 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների պաշտոններ: Պաշտոններից ազատվել են 3 առողջապահական բաժնետիրական ընկերությունների և 4 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: 1 առողջապահական բաժնետիրական ընկերության և 1 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենների աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է 2 տարի ժամկետներով: 1 առողջապահական բաժնետիրական ընկերության և 3 առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ «Նկատողություն» և «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայությամբ գործում են հանրակրթական, հատուկ հանրակրթական, մարզական և մշակութային 93 պետական ոչ առևտրային կազմակերպություններ, որից՝ 1 մշակույթի կենտրոն, 2 մարզադպրոցներ, 59 միջնակարգ դպրոցներ, 30 հիմնական դպրոցներ և 1 հատուկ (օժանդակ) դպրոց: Թափուր է 7 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոն: Նշանակվել են 17 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ: Ազատվել են 19 պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններ, որից 2-ը անձնական դիմումի համաձայն, 12-ը՝ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով և 5-ը՝ պաշտոնավարման առավելագույն տարիքը լրանալու հիմքով (65 տարեկան): 13 պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 7-ը «Նկատողություն» և 6-ը «Խիստ նկատողություն» կարգապահական տույժի:

13. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

2019 թ.-ի ընթացքում տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն իր հիմնական խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ կատարել է մարզպետարանի կողմից իրականացվող նախաձեռնությունների, աշխատանքային խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների, Կոտայքի մարզպետի, փոխմարզպետերի, մարզպետարանի պաշտոնատար անձանց այցելությունների, մարզի համայնքներում տեղի ունեցող իրադարձությունների լուսաբանման աշխատանքներ (շուրջ 750 թողարկում):

2019 թվականի ընթացքում պարբերաբար կազմակերպել է զանգվածային լրատվության ներկայացուցիչների հետ Կոտայքի մարզպետի հարցազրույցներն ու հանդիպումները:

Ապահովել է մարզպետարանի և լրատվամիջոցների միջև կապն ու ակտիվ համագործակցությունը:

Ապահովվել է օրենսդրությամբ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը տարին առնվազն մեկ անգամ: Մասնակցել է մարզպետարանում անցկացվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին, բանակցություններին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին և ապահովել է դրանց հրապարակայնությունը:

Իրականացրել է մարզպետարանի պաշտոնական կայքէջի անխափան աշխատանքը: Մարզպետարանի պաշտոնական կայքէջով իրականացրել է օրենսդրությամբ նախատեսված տեղեկատվության պատշաճ հրապարակում համապատասխան բաժիններում և ենթաբաժիններում:

2019 թվականի ընթացքում Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքէջում ըստ անհրաժեշտության, ավելացվել են նոր բաժիններ:

14. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ

ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2019թ. տարեկան ծրագիրը պլանավորվել է ռիսկերի գնահատման հիման վրա և հանդիսանում է ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2019-2021թթ. ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մասը: 2019թ. ներքին աուդիտի տարեկան ծրագիրը հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզպետի 28.12.2018թ. N 393-Ա որոշմամբ, որով 2019թ. իրականացվել է թվով 36 աուդիտ, որից 1-ը՝ մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներում, 3-ը՝ 100% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում, 32-ը՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններում:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2019թ-ին նախատեսված աշխատանքները իրականացվել են ամբողջ ծավալով:

Աուդիտի արդյունքներով թվով 2 տնօրենի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն», իսկ թվով 2 տնօրենի նկատմամբ՝ «նկատողություն» կարգապահական տույժերը:

15. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2019 թվականի ընթացքում՝ զորահավաքային նախապատրաստության շրջանակներում բաժինը մշտապես համագործակցել է պետական կառավարման այլ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի այլ ստորաբաժանումների հետ: Մարզի համայնքներում իրականացվել են նաև զորահավաքային գործառույթների կատարման բարելավման և գաղտնի գործավարության վարման համար անհրաժեշտ պայմանների ապահովման աշխատանքներ:

Պետությունը պաշտպանության նախապատրաստելու շրջանակներում՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն, ՀՀ Կոտայքի մարզպետարանում 2019 թվականի մայիսի 15-ին, հուլիսի 23-ին և նոյեմբերի 13-ին կազմակերպվել և անցկացվել են առանձնացված շտաբային մարզումներ: 2019թ. թվականի ապրիլի 26-ին՝ որպես մարզպետարանի ներկայացուցիչ բաժնի պետը մասնակցել է ՀՀ Լոռու մարզպետարանում կայացած ցուցադրական շտաբային մարզմանը, իսկ հունիսի 13-ին՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում կայացած «Քաղաքացիական պաշտպանության մարզային կապի ծառայության» վերաբերյալ խորհրդակցությանը: 2019թ. թվականի հոկտեմբերի 22-26-ը ընկած ժամանակահատվածում՝ բաժնի պետը մասնակցել է նաև ՀՀ պաշտպանության նախարարությունում կայացած ամենամյա հավաք-պարապմունքներին:

Բաժնի լիազորությունների շրջանակներում իրականացվել են նաև սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 5-ը անցկացված ռազմավարական զորավարժությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքներ, համագործակցելով մարզի զինվորական կոմիսարիատի և համայնքների հետ:

Շնորհակալություն ուշադրության համար:

2020 թվականին մենք արդյունավետորեն կյանքի ենք կոչելու 2019-ին մեկնարկած մեր բոլոր ձեռնարկները, նախաձեռնելու ենք է՛լ ավելի մասշտաբային ու հավակնոտ ծրագրերը և այդ ամենը հանուն Հայաստանի Հանրապետության, հանուն Կոտայքի մարզի և նրա արժանապատիվ Քաղաքացու:

Ի գո՛րծ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*****

---

* Իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության լիազոր մարմնի (ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի) հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան: Այն տարածվում է տեղական ինքնակառավարման մարմինների սեփական և պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ:

2019 թվականին իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացվել է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364-Ա հրամանի համաձայն:

Իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացվել է համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմինների և իրավական հսկողության լիազոր մարմնի համատեղ հրամաններով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

2019 թվականի աշխատանքային ծրագրում ընդգրկվել են մարզի 14 համայնքներ (Ծաղկաձոր, Աբովյան, Արամուս, Ջրվեժ, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Թեղենիք, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Բյուրեղավան, Գեղադիր, Գառնի):

Նախատեսված բոլոր 14 համայնքներում՝ սահմանված կարգով, իրականացվել են իրավական և մասնագիտական հսկողություններ:

Հսկողության արձանագրությունները սահմանված կարգով տրվել են համայնքների ղեկավարներին և ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Յուրաքանչյուր համայնքում իրականացված հսկողությունից հետո մարզպետարանում կատարվել են իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկումներ՝ մարզպետի, աշխատանքային խմբի անդամների, համայքների ղեկավարների և համայնքապետարանի աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների մասնակցությամբ:

Համայնքների կողմից ձեռնարկված միջոցառումների և կատարված աշխատանքների նկատմամբ իրականացվել է վերահսկողություն:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների շտկման նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին տեղեկատվությունները սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները հրապարակվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացվել է հետևյալ բնագավառներում՝

1.քաղաքացիական կացության ակտերի գրանցման, 2. արտակարգ իրավիճակների, 3. առևտրի և ծառայությունների, 4.բնապահպանության, 5. ընդերքօգտագործման, 6. անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, 7. հողօգտագործման, 8. կրթության, 9. մշակույթի, 10. պաշտպանության, 11. սոցիալական պաշտպանության, 12. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, 13. տրանսպորտի և կապի, 14. ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ, 15. առողջապահության, 16. քաղաքաշինության, 17. տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներում:

Համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում արձանագրվել են հետևյալ ընդհանուր բնույթ կրող խախտումները.

Արտակարգ իրավիճակների և պաշտպանության բնագավառներ

Թեղենիք, Նոր Գեղի համայնքները դեռևս չունեն քաղաքացիական պաշտպանության պլան:

Շատ համայնքներում քաղաքացիական պաշտպանության պլաններում ճշտումներ չեն կատարվել յուրաքանչյուր տարի՝ հունվարի 1-ի դրությամբ՝ Սոլակ, Ծաղկաձոր, Արամուս, Արգել, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Գառնի, Գեղադիր:

Համայնքների ղեկավարների որոշումներով չեն ստեղծվել քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ՝ դրանք են Ծաղկաձոր, Արամուս, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Կաթնաղբյուր, Գառնի, Բյուրեղավան համայնքները:

Որոշ համայնքներ դեռևս չունեն հաստատված համայնքի բնակչության տարահանման պլաններ կամ դրանք դեռևս համաձայնեցված չեն Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետի հետ և դեռևս ամբողջական չեն՝ Ծաղկաձոր, Նոր Գեղի, Թեղենիք, Կաթնաղբյուր, Գառնի, Բյուրեղավան:

Համայնքների տարահանման հանձնաժողովների կողմից առնվազն եռամսյակը մեկ նիստեր չեն գումարվել /կանոնադրության 5.3 կետի պահանջը/: Բոլոր Համայնքներում:

-Համայնքների ղեկավարների կողմից չեն մշակվել և սահմանված կարգով հաստատվել ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան՝ բոլոր համայնքներում, բացառությամբ Գառնի և Ձրվեժ համայնքների:

Սոլակ, Կաթնաղբյուր, Մայակովսկի համայնքները չունեն սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներ:

***Շատ համայնքներում զինվորական հաշվառումը դեռևս նոր ՀՀ կառավարության 8.11.2018թ. թիվ 1269-Ն որոշմամբ հաստատված կարգով չեն կատարվում կամ կատարում են մասամբ: /Ծաղկաձոր, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Թեղենիք, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Գառնի, Բյուրեղավան/:

Առևտրի և ծառայությունների բնագավառ

<<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան, հստակեցված չեն օբյեկտների դասակարգումը և պատշաճ հաշվառում չի իրականացվում՝ ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների՝ բոլոր համայնքներում:

Հսկողություններ ընդհանրապես չեն իրականացվել Գառնի համայնքում, իսկ այն համայնքներում որտեղ իրականացվել են, դրանք հիմնականում կրել են ձևական բնույթ, հսկողության փաստաթղթերը կազմվել են թերություններով և չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին: Հսկողություններ իրականացված համայնքներում խախտումներ չեն արձանագրվել, սակայն իրավական և մասնագիտական հսկողության ժամանակ համայնքապետարանների աշխատակիցների հետ շրջայցի ժամանակ առևտրի օբյեկտներում հայտնաբերվել են բազմաթիվ թերություններ և բացթողումներ: Այն է. առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը չի կատարվում ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում, ապահովված չեն ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակներով, շատ ապրանքներ չունեն գնապիտակներ, սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտի աշխատողները առանց աշխատանքային արտահագուստի են, առկա են նաև ժամկետանց ապրանքներ և այլն: Համայնքների ղեկավարները այս բնագավառում թերի կամ ընդհանրապես չեն կատարել օրենքով նախատեսված իրենց սեփական լիազորությունները /պարտադիր խնդիրները/: Բոլոր համայնքներում:

Առևտրի և հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունները տրվել են ՀՀ կառավարության 19.07.2007թ-ի N 843-Ն որոշման պահանջների խախտումներով: Տրված թույլտվությունները հակասում են <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջին՝ հիմնականում բոլոր համայնքներում:

Հիմնականում բոլոր համայնքներում՝ համայնքների վարչական տարածքներում գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտների ընդհանուր օգտագործման տարածքները սխալ են հաշվարկել, որի արդյունքում գանձվել են պակաս տեղական տուրքեր: Այդ համայնքների ղեկավարներին առաջարկվել է անդրադառնալ և ճշտել համայնքի վարչական տարածքում

գործող առևտրի և հանրային սննդի օբյեկտների ընդհանուր մակերեսները և գանձել պակաս գանձված տեղական տուրքերը:

-Բոլոր համայնքներում գործող շատ կենցաղային ծառայության օբյեկտներում սպառողներին տեսանելի տեղում փակցված չեն մատուցվող ծառայությունների գնացուցակները, ինչպես նաև ապահովված չեն սահմանված ցուցանակներով:

Պետք է նշել նաև, որ Ծաղկաձոր, Սոլակ, Գառնի, համայնքների տեղական տուրքերը սահմանվել են բացթողումներով և թերություններով, պարզ չեն /օրենքով սահմանված/ ավագանու կողմից կիրառված գործակիցները, դրանք ներկայացված չեն ինչպես որոշումներում, այնպես էլ նախագծերում և արձանագրություններում, չկա որևէ փաստաթուղթ դրանց կիրառման վերաբերյալ, կարելի է ենթադրել, որ տուրքերը սահմանվել են կամայական, առանց ավագանուն պատշաճ ձևով ներկայացման:

Թեղենիք համայնքում 2019թ. հունվարից առևտրի և հանրային սննդի օբյեկտներ չեն գործում:

Կրթության և մշակույթի բնագավառներում

Թեղենիք, Արամուս, Ջրվեժ, Կաթնաղբյուր, Մայակովսկի համայնքներում չեն գործում մանկապարտեզներ:

-Հիմնականում բոլոր համայնքների մանկապարտեզներում՝ մանկապարտեզների տնօրենների կողմից երեխայի ընդունման և ազատման, ինչպես նաև ներքին տեղափոխության վերաբերյալ հրամանները ընդունվել են թերություններով, դրանք չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին: Երեխաների շարժի մատյանները վարվում են թերություններով և բացթողումներով: Հաստատության և ծնողի միջև կնքված պայմանագրերը նույնպես կազմված են թերի: Երեխաների անձնական գործերում առկա են բացթողումներ: Մանկապարտեզները չունեն ներքին կարգապահական կանոններ կամ հաստատվել են բացթողումներով և թերություններով՝ չեն համապատասխանում կազմակերպության իրական գործունեությանը:

Բյուրեղավան, Գառնի, Աբովյան /ոչ բոլոր մանկապարտեզներում/, Նոր Երզնկա համայնքների մանկապարտեզներում կազմավորված խմբերը գերբեռնված են:

Գեղադիր, Աբովյան/9 մանկապարտեզ/, Արգել, Սոլակ, Նոր Գեղի համայնքների մանկապարտեզներ չունեն նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիաներ:

Որոշ համայնքների մանկապարտեզների հաստիքացուցակները չեն համապատասխանում ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ-ի հունվարի 26-ի N 29-Ն հրամանի պահանջներին, պահում են ավել հաստիքներ, դրանք են Ծաղկաձոր, Ձորաղբյուր բնակավայր, Սոլակ, Գառնի:

***

Թեղենիք, Գառնի համայնքների մարզա-մշակութային կազմակերպությունների շենքերը կարիք ունեն հիմանորոգման և գույքի, հիմնականում չեն ծառայում իրենց նպատակին:

Մարզա-մշակութային շենքեր չունեն Կաթնաղբյուր, Գեղադիր, Մայակովսկի համայնքները:

Պատշաճ հսկողություն և սրտացավ վերաբերմունք չեն ցուցաբերվում գրադարանների գործունեությանը՝ Ձորաղբյուր բնակավայրում, Թեղենիք, Կաթնաղբյուր համայնքներում:

***ՀՀ կառավարության հաստատված՝ մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված, համայնքների վարչական տարածքներում գտնվող մի շարք հուշարձանների տարածքներ ապօրինի օգտագործվում են, ցանկապատվել են բնակիչների կողմից, տարածքներում կատարվել են շինարարական և գյուղ. աշխատանքներ, տարածքներում առկա են կենցաղային աղբի ապօրինի աղբաթափման երևույթներ՝ Գառնի, Կաթնաղբյուր, Նոր Գեղի, Ձորաղբյուր բնակավայրում:

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող բնագավառ

-Շատ համայնքներում ավագանու որոշումների նախագծերը կազմվել են բացթողումներով և թերություններով: Բացակայում են նախագծերի ընդունման դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին տեղեկանքները, ավագանու իրավասու հանձնաժողովներում քննարկման արդյունքներում ձևավորված կարծիքները, ինչպես նաև

ամփոփաթերթերը՝ նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների հետևանքով ստացված առարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման պատճառների վերաբերյալ: Պարզ չեն նաև նախագծերի ձևավորման, մշակման և աշխատակազմի քարտուղարին ներկայացման օրերը: Այդ համայնքներն են՝ Ծաղկաձոր, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Թեղենիք, Գառնի, Գեղադիր:

Նոր Գեղի, Արգել համայնքներում դեռևս չեն ստեղծվել ավագանու մշտական հանձնաժողովներ:

Սահմանված կարգով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ չեն ստեղծվել՝ Սոլակ, Նոր Գեղի, Թեղենիք, Կաթնաղբյուր, Գառնի համայնքներում:

-Համայնքի ղեկավարի ներկայացմամբ սեփական լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ ավագանին որոշումներ չի ընդունել, իսկ այն համայնքները, որոնք ունեն հաստատված կարգ՝ կազմվել են թերություններով և բացթողումներով՝ Ծաղկաձոր, Սոլակ, Նոր Գեղի, Թեղենիք համայնքներում:

-Կաթնաղբյուր համայնքում դեռևս կան ավագանու նիստեր, որոնց գումարման ժամանակահատվածը գերազանցել է 2 ամիսը:

Ծաղկաձոր, Աբովյան, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Գառնի, Բյուրեղավան համայնքներում սահմանված կարգով միջոցներ չեն ձեռնարկվել ավագանու այն անդամների նկատմամբ, որոնք բացակայել են ավագանու նիստերի ավելի քան կեսից, նման դեպքերում՝ սահմանված կարգով ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել:

-Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ, ստուգվող ժամանակահատվածում հիմնականում չեն անցկացվել /կամ անցկացվել են ավագանու կողմից հաստատված կարգին ոչ համապատասխան/՝ Սոլակ, Նոր Գեղի, Կաթնաղբյուր, Թեղենիք, Գառնի համայնքներում:

Ավագանու նորմատիվ որոշումների նախագծերը սահմանված կարգով չեն ուղարկվել փորձաքննության՝ ՀՀ արդարադատության նախարարություն, չի կատարվել <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 6-րդ հոդվածի պահանջը՝ Ծաղկաձոր, Նոր Գեղի, Թեղենիք, Կաթնաղբյուր, Գառնի, Գեղադիր /2018թ./ համայնքներում:

-Ավագանու նորմատիվ որոշումները չեն հրապարակվել համայնքների ղեկավարների կողմից՝ բոլոր համայնքներում, բացառությամբ Ջրվեժից, Մայակովսկուց:

-Հիմնականում բոլոր համայնքներում՝ համայնքների ավագանու, ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում առկա են մի շարք թերություններ և բացթողումներ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի և այլ բնույթի, որոնց կարգավորման համար տեղում տրվել են համապատասխան պարզաբանումներ:

-Գառնի համայնքում ավագանու նիստերի արձանագրություններ չեն կազմվել:

Ավագանու մի շարք որոշումներին կցված չեն հավելվածները՝ Արամուս, Սոլակ, Նոր Գեղի, Գառնի:

Համայնքապետարանների աշխատակազմերի հաստիքացուցակներում չի պահպանվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության <<Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքի հաստատման, հաստիքացուցակի կազմման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման>> մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջը, այն է՝ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբում ընդգրկված պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը չպետք է գերազանցի տվյալ ենթախմբին հաջորդող ենթախմբի պաշտոնային դրույքաչափի 90 տոկոսը՝ աստիճանակարգված և հաշվարկված աշխատակազմի քարտուղարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ: Բոլոր համայնքներում, բացառությամբ Մայակովսկի համայնքից:

Համայնքների ղեկավարները պայմանագրային հիմունքներով աշխատողներ են ընդունել իրենց աշխատակազմերում, այդ հաստիքները բացակայում են ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակներից, խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Հանրային

ծառայության մասին>> ՀՀ օրենքների պահանջները՝ Աբովյան, Ծաղկաձոր, Բյուրեղավան, Կաթնաղբյուր համայնքներում:

Համայնքի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվել են թերի և կան սխալներ, սահմանված որոշ տուրքեր չեն համապատասխանում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ Ծաղկաձոր, Սոլակ, Նոր Գեղի, Գեղադիր:

-Ստուգվող ժամանակաշրջանի ավագանու իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվել են բացթողումներով և սխալներով, չկան նշումներ նորմատիվ իրավական ակտերի մասին, նորմատիվ որոշումների ուժի մեջ մտնելու ամսաթվերը գրված են սխալ: Հիմնականում բոլոր համայնքներում:

Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ չի կատարել և չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը: Չեն կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի պահանջները: Հիմնականում բոլոր համայնքներում:

Աբովյան համայնքում համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերը չեն ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:

Թեղենիք համայնքի ղեկավարը բյուջեի կատարման 2017 և 2018 թթ տարեկան հաշվետվությունները չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը, խախտելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի պահանջը:

-Համայնքների աշխատակազմերում լիարժեք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարգավորված չեն աշխատակազմերի արխիվային գործերը: Չի կատարվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Աշխատակազմի արխիվում և աշխատակազմի տեղեկատվական համակարգում փաստաթղթերը համալրվում, հաշվառվում և պահպանվում են «Արխիվային գործի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Բոլոր համայնքներում, բացառությամբ Աբովյանից:

Նոր Գեղի, Բյուրեղավան համայնքները դեռևս չունեն հաստատված քաղաքաշինական կանոնադրություններ:

-Չեն պահպանվել նաև համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրության պահանջները, մասնավորապես աշխատակազմերի կադրային գործի վարման գործընթացներում: Կան համայնքներ որտեղ աշխատակազմերի համայնքային ծառայողների ատեստավորման ժամկետները լրացել են և սահմանված ժամկետներում ատեստավորումներ չեն նշանակվել: Համայնքային ծառայողի հերթական ատեստավորումն անցկացվում է երեք տարին մեկ:

Թերություններ և բացթողումներ արձանագրվել է հիմնականում բոլոր համայնքներում,

Աշխատակազմերում առկա են համայնքային ծառայության թափուր պաշտոններ, որոնց սահմանված կարգով զբաղեցնելու համար մրցույթներ սահմանված ժամկետներում չեն հայտարարվել և այդ պաշտոնները սահմանված կարգով համալրելու ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել: /Կամ օրենքով սահմանված կարգով պետք է դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ թափուր պաշտոնները աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերից հանելու համար:/ Ծաղկաձոր, Ջրվեժ, Արգել, Սոլակ, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Գառնի, Բյուրեղավան:

Ֆինանսների բնագավառում

1.Համայնքի հեռախոսակապի ծախսերի նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ բջջային հեռախոսակապի համար առկա չէ համայնքի ավագանու որոշում՝ լիմիտը սահմանելու վերաբերյալ:/ Արամուս, Ծաղկաձոր, Ձորաղբյուր, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Նուռնուս/:

2. Խախտվել են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5-Ն հրամանի պահանջները, մասնավորապես չեն պահպանվել հոդվածային ճիշտ փոխանցումները:/ Արամուս, Ջովք, Նոր Գյուղ, Ակունք, Նոր Գեղի, Սոլակ, Նոր Երզնկա, Թեղենիք, Գառնի, Գեղադիր, Նուռնուս, Բյուրեղավան/:

3. Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տարիֆիկացիոն ցուցակը հաստատվել է առանց համայնքի ղեկավարի որոշմամբ: /Ծաղկաձոր, Զորաղբյուր, Նոր Գեղի, Սոլակ, Գառնի/:

4. Համայնքի բյուջեից տրված սոց օգնությունների համար համայնքի ավագանու որոշմամբ չի սահմանվել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների կարգ: /Նոր Գյուղ, Թեղենիք, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Գառնի/:

5.Գնումների բազային միավորից ավել գնման դեպքում չեն պահպանվել < Գնումների մասին> ՀՀ օրենքի պահանջները: /Զորաղբյուր, Նոր Գյուղ, Նոր Գեղի, Սոլակ, Թեղնիք, Կաթնաղբյուր, Գառնի/:

6. Համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզի հաստիքային միավորները գերազանցում է ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի N 29-Ն հրամանով սահմանված դրույքային միավորները:/ Զորաղբյուր, Նոր Գեղի, Գառնի, Գեղադիր/

7.Համայնքի բյուջեից մասնավոր դպրոցի ֆինանսավորում:/Նոր Գեղի/

8. Գնումների պլանի բացակայություն ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում:/Նոր Գեղի, Թեղենիք, Կաթնաղբյուր, Գեղադիր/:

9. <Գնումների մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերի բացակայություն:/Նոր Գեղի, Արգել, Սոլակ, Նոր Երզնկա/

10.Գույքագրման փաստաթղթերի ոչ ճիշտ ներկայացում համայնքի ավագանուն: /Նոր Գեղի, Գեղադիր, Նուռնուս, Թեղենիք/:

11. Առանց անկախ փորձագետի եզրակացության գույքի օտարում կամ գնում: /Սոլակ, Բյուրեղավան, Նոր Գեղի, Նուռնուս/:

12. Համայնքի գույքահարկի և հողի հարկի գանձումների անդորրագրերի շարժը չի իրականացվում սահմանված կարգով Թեղենիք համայնքում:

Հողաշինության բնագավառ

Ստուգումներն իրականացվել են հողային հարաբերությունների բնագավառում վերը նշված համայնքների ղեկավարների կողմից իրականացված գործունեությունը ՀՀ Հողային օրենսդրության պահանջների համապատասխանության ուսումնասիրության նպատակով, որոնց արդյունքում արձանագրվել են հետևյալ խախտումները՝

1. Արձանագրվել են ՀՀ կառավարության 2001թ. թիվ 286 որոշման 3-րդ կետի

ա /ենթակետով սահմանված դրույթների խախտումներ, համաձայն որի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարումը, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրումը իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, անտառշինարարական նախագծերով, բնակավայրի գլխավոր հատակագծերով նախատեսված նպատակներով օգտագործելու համար սահմանված կարգով:

–Նշված դրույթի խախտումներ արձանագրվել են Աբովյան համայնքում՝ 30 միավոր, Նոր Գեղի համայնքում 11 միավոր և Գառնի համայնքում 1 միավոր:

-Աբովյան համայնքում արձանագրվել է նաև փաստացի ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված 1 միավոր հողամասի օտարման դեպք:

2. Մի շարք համայնքներում արձանագրվել են հողամասերի ոչ նպատակային նշանակությամբ օգտագործման փաստեր՝ մասնավորապես Արամուս համայնքում 3 դեպք, Նոր Գեղի համայնքում 2 դեպք, Սոլակ համայնքում 3 դեպք, Թեղենիք համայնքում 3 դեպք, Գառնի համայնքում 26 դեպք, Գեղադիր համայնքում 3 դեպք, Բյուրեղավան համայնքում 5 դեպք:

3. Ստուգման ընթացքում արձանագրվել են նաև ՀՀ կառավարության 2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով սահմանված դրույթի խախտումներ՝ այն է գյուղ. նշանակության հողամասերի աճուրդների դեպքում մեկ լոտով օտարվող հողամասի նվազագույն ձափը չի կարող պակաս լինել տվյալ համայնքում սեփականաշնորհված հողաբաժնի չափից:

Նշված խախտումները արձանագրվել են՝

Ջրվեժ համայնքում 3 դեպք,Նոր Գեղի համայնքում 14 դեպք, Սոլակ համայնքում 5 դեպք, Թեղենիք համայնքում 4 դեպք, Մայակովսկի համայնքում 1 դեպք, Գառնի համայնքում 3 դեպք և Գեղադիր համայնքում 1 դեպք:

Վերը նշված խախտումների համար հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ, 56-րդ, 56.1-րդ, 56.2-րդ, 56.3-րդ և 244.9-րդ հոդվածների և Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին օրենքի 8-րդ հոդվածի դրույթներով սահմանված պահանջները ՀՀ Կոտայքի մարզպետի համապատասխան որոշումներով վարչական տուգանքներ են նշանակվել Աբովյան (300.0 հազար դր.), Արամուս (150.0 հազար դր.), Թեղենիք (150.0 հազար դր.), Մայակովսկի (150.0 հազար դր.), Գառնի (200.0 հազար դր.), Գեղադիր (150.0 հազար դր.), Բյուրեղավան (150.0 հազար դր.), Ակունք (150.0 հազար դր.) համայնքների ղեկավարներին և Ջրվեժ համայնքի Ջովք բնակավայրի վարչական ղեկավարին (150.0 հազար դր.): Արդյունքում՝ բացառությամբ Աբովյան համայնքի ղեկավարի, նշված համայնքների ղեկավարները նշանակված վարչական տուգանքները ՀՀ պետ. բյուջե են մուտքագրել, որի ընդհանուր գումարի չափը կազմում է 1250.0 հազ. դրամ:

Քաղաքաշինության բնագավառ

Համայնքներում շրջայցերի ժամանակ հաշվառվել են թվով 93 ինքնակամ շինություններ՝ տարբեր նպատակային նշանակության հողերի վրա որոնցից. Աբովյան համայնք՝ 6, Արամուս համայնք՝ 10, Արգել համայնք՝ 3, Բյուրեղավան համայնք՝ 3, Գառնի համայնք՝ 33, Գեղադիր համայնք՝ 4, Թեղենիք համայնք՝ 1, Ծաղկաձոր համայնք՝ 4, Կաթնաղբյուր համայնք՝ 4, Մայակովսկի համայնք՝ 4, Նոր Գեղի համայնք՝ 5, Նոր Երզնկա համայնք՝ 7, Ջրվեժ համայնք՝ 4, Սոլակ համայնք՝ 5, որոնց օրինականացման համար համայնքներում տարվում են աշխատանքներ:

Արգել, Բյուրեղավան, Թեղենիք, Կաթնաղբյուր, Մայակովսկի, Նոր Երզնկա և Սոլակ համայնքները չունեն հաստատված գլխավոր հատակագիծ:

Համայնքների ղեկավարների կողմից տրված շինարարության թույլտվությունների և շինարարության փաստագրման թույլտվությունների իրազեկումը մարզպետարան կատարվել է ոչ ամբողջությամբ բացառությամբ Արամուս, Բյուրեղավան, Գեղադիր, Թեղենիք և Մայակովսկի համայնքների:

Բոլոր համայնքների ղեկավարների կողմից տրված նախագծման թույլատվություններում լրացված չեն պատվիրատուների հեռախոսահամարները և օբյեկտի ռիսկայնության աստիճանը, 9.3 և 9.5 կետերը նախագծման թույլատվություններից բացակայում են: Նախագծային փաստաթղթերում գլխավոր հատակագծում չեն երևում հողամասի չափերը և բացակայում է 1:500, 1:1000 և 1:2000 մասշտաբի հատակագծերը:

Համայնքների ղեկավարների կողմից վարչական վարույթներ ոչ բոլոր շինարարություն իրականացնող կառուցապատողների նկատմամբ է իրականացվում (բոլոր համայնքներում):

Համայնքի բյուջեի միջոցներով իրականացված աշխատանքների համար շինարարական փաստաթղթերը համայնքներից մի քանիսում բացակայում են բացառությամբ Արամուս, Բյուրեղավան, Գառնի, Գեղադիր, Կաթնաղբյու, Մայակովսկի, Նոր Երզնկա, Ջրվեժ և Սոլակ համայնքների:

Բոլոր համայնքներում գերեզմանատների մուտքի մոտ բացակայում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները, չեն պահպանված սանիտարական գոտիները, վկայականներ չեն տրամադրվում: Համայնքներից մի քանիսում գերեզմանատները փաստացի զբաղեցնում են ավելի շատ տարածքներ քան սահմանվում է 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման պահանջներով:

Համայնքային ենթակայության ճանապարհների պահպանման և շահագործման ուղղությամբ ճանապարհների կահավորման նպատակով բոլոր համայնքներում սխեմաներ չեն կազմվել՝ բացառությամբ Բյուրեղավան համայնքի:

Բնապահպանության բնագավառ

1. Համայնքներում լիարժեքորեն չի իրականացվում չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի /աղբանոցների/ վերացմանը /լիկվիդացմանը/ ուղղված աշխատանքները, ՀՀ „Թափոնների մասին„ օրենք հոդ. 11 /տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված իրավասություններ/:

2. Համայնքներում չսահմանված տեղերում և վայրերում կատարվել են ապօրինի աղբաթափման երևույթներ, սակայն այն ժամանակին չի կանխվել և բնապահպանական

իրավախախտման մասին պատշաճ ձևով տեղյակ չի պահվել բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանմանը, ,,Բնապահպանական վերահսկողության մասին''ՀՀ օրենք հոդ.36:

Առողջապահության բնագավառ

1.Համայնքի ավագանու կողմից հաստատված աղբահանության դրույքաչափը պարտադիր գանձույթ է, սակայն մի շարք համայքներում դեռևս բավարար չէ գանձման ուղղությամբ տարվող աշխատանքները, հաստատված չէ աղբահանության սխեման և ժամանակացույցը, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենք հոդ.5,13, 14: Համայնքների կողմից, որոնք ունեն շահագործվող աղբավայրեր, չեն իրականացվում հողի շերտով հարթեցման աշխատանքներ, առկա են ինքնաայրման երևույթներ /Աբովյան, Բյուրեղավան, Արամուս, Ջրվեժ, Գառնի, Նոր Գեղի/:

2. Աղբահավաք կոնտեյներները/ Աբովյան, Բյուրեղավան, Գառնի/ չեն պարունակում աղբահանության ընկերության հասցեն կամ անվանումը կամ ծածկագիրը, չունեն մաքրման և ախտահանման հարթ մակերեսներ, չեն ախտահանվում համապատասխան ախտահանիչ լուծույթներով. Իսկ Աբովյան համայնքում բազմաբնակարան շենքերից չի իրականացվում ամենօրյա աղբահանություն՝ +5 աստիճանից ավելիի և 3-օրյա մնացած դեպքերում, ինչպես նաև խնդիրներ կան աղբանոթների ախտահանման և աղբախցերի հերմետիկության մասով: Ընդհանուր առմամբ չի կատարվում ՀՀ առողջապահության նախարարի 22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանի պահանջները:

Ընդերքօգտագործման բնագավառ

Արամուս համայնքում առկա են բազալտի հանքարդյունահանման թույլտվություն ստացած 5 կազմակերպություն, որից <<Լամо>> ՍՊԸ-ն իրականացրել է իրեն հողհատկացմամբ տրամադրված տարածքից դուրս շահագործում, <<Դեմեր>> ՍՊԸ-ն շահագործում է կատարել հողհատկացման տարածքից ավել 0.4 հա չափով, <<Ա.Ա.Բ. Պրոեկտ>> ՍՊԸ-ն ունի հողի վարձակալության պարտք 628.0 հազ. դրամի չափով, իսկ << Բեն-Ան>> ՍՊԸ-ի հողի վարձակալության պարտքը կազմում է 400 հազ. դրամ:

Սոցիալական պաշտպանության բնագավառ

- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնային հաշվառման մատյանները առկա էին, սակայն հաշվառված երեխաների տվյալները լրացված չէին Նոր Գեղի, Ծաղկաձոր համայնքներում:
- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնային հաշվառման մատյաններ առկա էին, նրանցում հաշվառված են երեխաներ, որոնց հաշվառման վերցնելու իրավական հիմքերը բացակայում էին, սակայն տվյալները լրացված էին մատյանում՝ Գառնի համայնքում:
- Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները տարվա ընթացքում նիստեր չեն գումարել, կամ գումարել են օրինակելի աշխատակարգում նշված պահանջվող քանակին անհամապատասխան՝ /Գառնի, Գեղադիր, Կաթնաղբյուր, Նոր Երզնկա, Արգել համայնքներում/:

Գառնի, Կաթնաղբյուր, Թեղենիք համայնքներում չկար խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից հաստատված խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատակարգ:

*****

*** Իրավական և մասնագիտական վերահսկողության արդյունքներով պարզվեց, որ դեռևս ոչ բոլոր համայնքներն են արձանագրված թերությունները և խախտումները շտկել, ինչպես նաև աշխատանքներ չեն տարել հետագայում նմանատիպ երևույթները բացառելու և չկրկնելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ դեռևս կան համայնքներ, որտեղ կրկնվում են նույնիսկ թերություններ և խախտումներ, որոնք արձանագրվել են 2015-17 թթ.:

Մարզպետի համապատասխան գրություններով համայնքների ղեկավարներին առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ՝ արձանագրված թերությունները և խախտումները

վերացնելու, ինչպես նաև աշխատակազմերում ձեռնարկելու միջոցառումներ՝ նմանատիպ թերություններից խուսափելու և հետագայում դրանք չկրկնելու ուղղությամբ, իսկ խախտումները կրկնվելու դեպքում անդրադառնալ աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների հետագա պաշտոնավարման նպատակահարմարությանը և կիրառել կարգապահական տույժեր:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, նախարարի կողմից ևս հանձնարարականներ են տրվում արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներում հայտնաբերված իրավախախտումներին իրավական գնահատական տալու համար գրություններ են ուղարկվել իրավապահ մարմիններին.

2018թ. ՀՀ Կոտայքի մարզի դատախազություն են ուղարկվել՝ Հրազդան, Պտղնի, Քասախ համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներում հայտնաբերված իրավախախտումները, որոնց մասերով հարուցվել են քրեական գործեր:

2019թ. ՀՀ Կոտայքի մարզի դատախազություն են ուղարկվել՝ Ակունք /Նոր գյուղ բնակավայրի/, Աբովյան /երկու դեպքով/ համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներում հայտնաբերված իրավախախտումները, որոնց մասերով նույնպես հարուցվել են քրեական գործեր:

Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները տեղադրվում են մարզպետարանի պաշտոնական կայքում:

*****

2018-2019 թթ. իրավական և մասնագիտական հսկողության ժամանակ արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ համայնքների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Աշխատանքային կարգով վերանայվել են նաև 2018-2019 թթ իրականացված իրավական և մասնագիտական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ համայնքների կողմից կատարված աշխատանքները՝ Քասախ, Պռոշյան, Նոր Երզնկա, Եղվարդ, Նոր Գեղի, Արգել, Նոր Արտամետ, Մրգաշեն, Նոր Հաճն, Պտղնի, Առինջ, Գետարգել, Գեղաշեն, Կամարիս, Արամուս, Ակունք, Ջրվեժ, Հացավան, Գեղարդ համայնքներում:

Ստորև ներկայացվում են իրավական և մասնագիտական հսկողությունների ժամանակ արձանագրված այն թերությունները՝ ըստ բնագավառների, որոնք դեռևս համայնքների ղեկավարների կողմից չեն կարգավորվել, չեն շտկվել.

Արտակարգ իրավիճակների և պաշտպանության բնագավառներ

- Արտակարգ իրավիճակների բնագավառում արձանագրված թերությունները և խախտումները ամբողջությամբ չեն շտկվել, կարգավորվել Գեղաշեն, Կամարիս, Մրգաշեն, Գեղարդ, համայնքներում:

Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան չունեն՝ Մրգաշեն, Արգել, Նոր Հաճն, Գետարգել, Նոր Գեղի, Նոր Երզնկա, Պռոշյան, Կամարիս, Ակունք, Գեղարդ համայնքները:

Պաշտպանության բնագավառում զինվորական հաշվառումը դեռևս նոր՝ ՀՀ կառավարության 8.11.2018թ. թիվ 1269-Ն որոշմամբ հաստատված, կարգով չի կատարվում կամ կատարվում է մասամբ Գեղաշեն, Գետարգել, Պտղնի, Քասախ, Նոր Արտամետ, Մրգաշեն, Կամարիս համայնքներում:

Առևտրի և ծառայությունների բնագավառ

Առևտրի և ծառայությունների բնագավառում արձանագրված թերությունները և խախտումները հիմնականում բոլոր համայնքներում շտկվել, կարգավորվել են մասամբ: Դեռևս վերահսկողություն իրականացված բոլոր համայնքների առևտրի օբյեկտներում առկա են թերություններ և բացթողումներ, առևտրի իրականացման վայրերում սննդամթերքի և ոչ

պարենային ապրանքների, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը չի կատարվում ըստ ապրանքախմբերի տարանջատված մեկուսամասերում, ապահովված չեն ՀՀ կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակներով, շատ ապրանքներ չունեն գնապիտակներ, սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի օբյեկտի աշխատողները առանց աշխատանքային արտահագուստի են և այլն:

Դեռևս բոլոր համայնքներում առևտրի և հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազի վաճառքի թույլտվությունները տրվում են ՀՀ կառավարության 19.07.2007թ-ի N 843-Ն որոշման պահանջներին ոչ համապատասխան:

Եղվարդ, Մրգաշեն համայնքներում դեռևս առևտրի և ծառայությունների օբյեկտներում հսկողություններ չեն իրականացվել:

Տեղական տուրքերի պակաս գանձումները կատարվել են մասամբ. Եղվարդ, Ձրվեժ /Ձորաղբյուր բնակավայրում/ համայնքներում:

Կրթության և մշակույթի բնագավառներում

Կրթության և մշակույթի բնագավառներում արձանագրված հիմնական բոլոր թերությունները և բացթողումները բոլոր համայնքներում կարգավորվել են:

Արգել, Սոլակ, Նոր Գեղի համայնքների մանկապարտեզները չունեն նախադպրոցական կրթական ծրագիր իրականացնելու լիցենզիաներ:

<<Եղվարդի կենտրոնացված գրադարանային համակարգ>> ՀՈԱԿ-ի տնօրենը՝ Թամարա Գևորգյանը, առանց բարձրագույն կրթության, նշանակվել է պաշտոնի, խախտելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը: Այս առումով համայնքի ղեկավարը դեռևս միջոցներ չի ձեռնարկել:

<<Եղվարդի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի տնօրենի՝ Սաթիկ Հակոբյանի, բարձրագույն կրթության դիպլոմը չի համապատասխանում պետական նմուշին: Ս. Հակոբյանը 1997թ. ավարտել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանը, որը չի ունեցել պետական հավատարմագրում: Այս առումով էլ համայնքի ղեկավարը դեռևս միջոցներ չի ձեռնարկել: Նույն խնդիրը կա նաև աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-9 ծածկագրով հաստիքի/՝ Նարինե Արշակյանի մոտ /դիմել է լիզոր մարմնին պետական նմուշի դիպլոմ ստանալու համար/:

Մրգաշենի մանկապարտեզի տնօրեն Մարգարիտա Մուրադյանը չունի բարձրագույն կրթություն: Այս առումով համայնքի ղեկավարը դեռևս միջոցներ չի ձեռնարկել:

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող բնագավառ

Գետարգել համայնքում ավագանու նորմատիվ որոշումների նախագծերը սահմանված կարգով չեն ուղարկվել փորձաքննության:

Առինջ, Գետարգել, Մրգաշեն, Նոր Գեղի, Պոռշյան, Կամարիս, Գեղաշեն, Հացավան համայնքների ավագանու որոշումների նախագծերը կազմվել են բացթողումներով և թերություններով:

Պտղնիի համայնքային սեփականություն համարվող երեք մարդատար ծառայողական ավտո մեքենաներից երկուսը առաջարկվել էր սահմանված կարգով օտարել, այս ուղղությամբ դեռևս աշխատանքներ չեն կատարվել:

Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին չունեն՝ Նոր Գեղի, Կամարիս համայնքներում:

Ավագանու մշտական հանձնաժողովներ չեն ստեղծվել՝ Գեղաշեն, Նոր Գեղի համայնքներում:

Ավագանու նորմատիվ որոշումները չեն հրապարակվում բոլոր համայնքներում, բացառությամբ Եղվարդ, Ձրվեժ, Հացավան համայնքների:

Ֆինանսների բնագավառում արձանագրված այն թերությունները և բացթողումները, որոնք ենթակա են կարգավորման՝ կարգավորվել են, շտկվել, իսկ այն թերությունները որոնք հնարավոր չեն կարգավորել, շտկել, օրինակ՝ գնումները, աճուրդները, օգնությունների տրամադրումը, ընդունվել են ի գիտություն և աշխատանքներ են տարվում և հսկվում չկրկնելու, հետագայում բացառելու ուղղությամբ:

Հողօգտագործման բնագավառում

Արձանագրված այն թերությունները և բացթողումները, որոնք ենթակա են կարգավորման՝ կարգավորվել են, շտկվել, իսկ այն թերությունները որոնք հնարավոր չեն կարգավորել, շտկել, օրինակ՝ հողերի աճուրդները, վարձակալությունները, ընդունվել են ի գիտություն և աշխատանքներ են տարվում և հսկվում չկրկնելու, հետագայում բացառելու ուղղությամբ:

Դեռևս կան համայնքներ, որտեղ սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել ինքնակամ կառուցապատված հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու և ինքնակամ կառուցված շենքերն ու շինություններն օրինականացնելու կամ քանդելու ուղղությամբ՝ Եղվարդը, Արգելը /դեռևս վերջնական չի կարգավորվել/:

Աճուրդների փաթեթները թերին են կազմված՝ հիմնականում բոլոր համայնքներում:

Քաղաքաշինության բնագավառ

Արձանագրված այն թերությունները և բացթողումները որոնք ենթակա են կարգավորման՝ կարգավորվել են, շտկվել, իսկ այն թերությունները որոնք հնարավոր չեն կարգավորել, շտկել, ընդունվել են ի գիտություն և աշխատանքներ են տարվում և հսկվում չկրկնելու, հետագայում բացառելու ուղղությամբ:

Չունեն գլխավոր հատակագիծ Ակունքը, Եղվարդը, Ջրվեժը /որպես խոշորացված համայնքներ/, Հացավանը, Արգելը, Նոր Երզնկա, Մրգաշեն, Պտղնի /ընթացքի մեջ է/, Առինջ, Գեղարդ համայնքները:

Չունեն քաղաքաշինական կանոնադրություն՝ Եղվարդ, Նոր Գեղի, Ակունք համայնքները:

Ընթացիկ քաղաքաշինական քարտեզ չունեն Մրգաշեն, Պռոշյան, Արգել համայնքները:

Չունեն քաղաքաշինական մատյան Կամարիս, Հացավան համայնքները:

Չունեն քաղաքաշինական անձնագիր բոլոր համայնքները /բացակայում է օրինակելի ձևը/:

Գերեզմանատների մուտքի մոտ բացակայում են գերեզմանատան հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները՝ բոլորը համայնքներում, բացառությամբ Նոր Հաճնի:

Համայնքային ենթակայության ճանապարհների պահպանման և շահագործման ուղղությամբ ճանապարհների կահավորման աշխատանքների սխեմաները չեն կազմվել՝ հիմնականում բոլոր համայնքներում /Ջրվեժում մասնակի/: *****

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ **Հ. Ալեքսանյան**

23.01.2020թ.

23.01.2020թ.

Զեկույց
Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ

2019 թվականի տարվա կտրվածքով մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակների գծով կատարվել է 102,6%-ով: Նախատեսված 4,064,552.8 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 4,168,425.9 հազար դրամ:

Համեմատելով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների հետ, այն է՝ 99,6%, համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կատարողականը բոլոր հարկատեսակները միասին վերցրած տոկոսային հարաբերակցությամբ աճել է:

Սեփական եկամուտների հավաքագրումը 6 (վեց) հարկատեսակների գծով / գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրք, պետական տուրք, հողի և գույքի վարձակալության վարձավճարներ, աղբահանության վճար/ կատարվել են 108.3%-ով: Նախատեսված 2,929,808.3 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 3,173,902.5 հազար դրամ:

Չնայած 6 (վեց) հարկատեսակների առաջադրանքը կատարվել է 108.3%-ով, բայց մարզում կան համայնքներ, որոնց կատարողականը շատ ցածր է, այն դեպքում, երբ մեր կողմից բազմիցս անգամ բարձրաձայնվել է, և հիմնավորումներ պահանջվել համայնքների ղեկավարներից հավաքագրումների ցածր ցուցանիշների վերաբերյալ:

Այժմ սեփական եկամուտների հավաքագրումը ներկայացնեմ ըստ առանձին հարկատեսակների:

1. Գույքահարկ – Կատարողականը՝ 115,0 %: Նախատեսված 1,498,800.5 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 1,723,676.4 հազար դրամ:

Գույքահարկի գծով ցածր ցուցանիշներ են արձանագրվել Կաթնաղբյուր (83.5%), Քարաշամբ (88.4%), Արգել (90.4%), Գետամեջ (93.1%) և Գառնի (94.7%):

2. Հողի հարկ - Կատարողականը՝ 100.9%: Նախատեսված 402,112.1 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 405,738.8 հազար դրամ:

Հողի հարկի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Քաղսի (70.4%), Գետարգել (83.7%), Քարաշամբ (83.3%), Սոլակ (86.0%), Բյուրեղավան (89.0%), Չարենցավան (89.2%), Գեղարդ (89.9%) և Պտղնի (89.9%) համայնքներում, որտեղ ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ չեն գերազանցում 90.0 տոկոսը, ինչը միանշանակ բավարար արդյունք չէ, և այստեղ համայնքի ղեկավարները պետք է վերանայեն իրենց գործելաոճը, լուրջ աշխատանքներ տանեն 2020 թվականին այս հարկատեսակի գծով ցուցանիշները բարելավելու ուղությամբ:

3. Տեղական տուրքեր- Կատարողականը՝ 119.0%: Նախատեսված 170,752.1 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 203,183.0 հազար դրամ:

Տեղական տուրքերի գծով առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել Քարաշամբ (64.3%), Գեղարդ (75.0%) և Գառնի (79.2%) համայնքներում:

4. Պետական տուրքեր- Կատարողականը՝ 132.8%: Նախատեսված 57,950.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 76,937.7 հազար դրամ:

5. Հողի և գույքի վարձակալական վարձավճարներ- Կատարողականը՝ 99.9%: Նախատեսված 249,155.2 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 248,911.9 հազար դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների գծով առավել ցածր կատարողականներ են արձանագրվել Պտղնի, Հրազդան, Պառոշյան, Քաղսի, Բալահովիտ, Բյուրեղավան, Նոր Արտամետ համայնքներում, որտեղ տոկոսներով արտահայտված կատարողականը տատանվում է 31.0-82.0%-ի միջակայքում:

Այստեղ նույնպես համայնքի ղեկավարները լուրջ և հետևողական աշխատանքներ պետք է իրականացնեն, որպեսզի ապահովեն բարձր ցուցանիշներ և հետագայում հնարավորինս հավաքագրումները հասցնեն 100 տոկոսի:

6. Աղբահանության վճարներ- Առաջադրանքը կատարվել է 93.5%-ով: Նախատեսված 551,038.4 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 515,454.8 հազար դրամ:

Աղբահանության վճարների գծով առավել ցածր կատարողականներ արձանագրվել են մարզի թվով 17 համայնքների մոտ, որտեղ ցուցանիշները տոկոսային արտահայտությամբ չեն գերազանցում 90.0 տոկոսը, ինչը բավարար արդյունք չէ:

Առաջարկում ենք բոլոր համայնքների ղեկավարներին ակտիվացնել հավաքագրման գործընթացը, բացատրական աշխատանքներ տանել համայնքի բնակիչների հետ աղբահանության վճարների հավաքագրումը բարելավելու նպատակով:

2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի բոլոր համայնքներում 500.0 հազար դրամ և ավել խոշոր ապառք ունեցողների պարտքը գույքահարկի գծով՝ հաշվի առած տույժերն ու տուգանքները, կազմել են 437,429.6 հազար դրամ, հողի հարկի գծով՝ 80,678.8 հազար դրամ, իսկ հողի և գույքի վարձակալական վարձավճարների գծով՝ 58,787.0 հազար դրամ:

Բանավոր և գրավոր պարզաբանումներ են ներկայացվել համայնքների ղեկավարներից, որ որոշակի աշխատանքներ են կատարվում ապառքների գանձման ուղղությամբ, կազմվել են պարտքերի մարման ժամանակացույցեր, ապառքատերերը պարբերաբար ծանուցվում են իրենց պարտքերի վերաբերյալ, որոշ գործեր դատական վարույթում են, կան նաև սնանկ ճանաչված ապառքատեր կազմակերպություններ, որոնց պարտքը խոշոր է:

Գույքահարկի գծով առավել խոշոր ապառքներ են կուտակվել հետևյալ համայնքներում՝ Ծաղկաձոր 46.3 մլն դրամ, Աբովյան 43.4 մլն դրամ, Ջրվեժ 48.4 մլն դրամ, Եղվարդ 55.3 մլն դրամ, Բյուրեղավան 29.9 մլն դրամ, Հրազդան 68.8 մլն դրամ, Առինջ 24.9 մլն դրամ, Չարենցավան 20.5 մլն դրամ, Արզնի 35.2 մլն դրամ և Նոր Հաճն 12.4 մլն դրամ:

Հողի հարկի գծով առավել խոշոր ապառքներ են կուտակվել հետևյալ համայնքներում՝ Եղվարդ 20.9 մլն դրամ, Ծաղկաձոր 9.2 մլն դրամ, Բյուրեղավան 12.6 մլն դրամ և Նոր Հաճն 8.1 մլն դրամ:

Հողի և գույքի վարձակալական վարձավճարների գծով առավել խոշոր ապառքներ են կուտակվել հետևյալ համայնքներում՝ Եղվարդ 21.7 մլն դրամ, Գառնի 11.1 մլն դրամ, Արզնի 7.3 մլն դրամ, Աբովյան 5.7 մլն դրամ և Հրազդան 5.4 մլն դրամ:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին մանրակրկիտ ուսումնասիրել և ճշգրտել խոշոր ապառքատերերի ցուցակները, ինչպես նաև համապատասխան աշխատանքներ տանել վերոգրյալ ապառքները հավաքագրելու ուղղությամբ, օրենքով սահմանված կարգով քայլեր ձեռնարկել հարկատուների նկատմամբ ապառքների գծով մարումները իրականացնելու ուղղությամբ:

Պետք է նաև անդրադառնամ համայնքապետարանների կողմից մեզ ուղարկվող հաշվետվություններին, չնայած գրավոր տեղեկացվել են, բայց կան համայնքապետարաններ, որոնք ուշացնում են նախարարի հանձնարարականներով պահանջվող ձևաչափերով կազմվող հաշվետվությունները: Եվս մեկ անգամ հիշեցնում ենք՝ պահպանել հաշվետվությունների ներկայացման ժամկետները և ժամանակին ներկայացրեք այն՝ մարզպետարան:

Եվ ի վերջո, վերանայեք Ձեր համայնքի 2020 թվականի բյուջեի եկամտային մասը, մասնավորապես՝ սեփական եկամուտների պլանավորումը, կան համայնքներ, որոնց պլանային ցուցանիշները անհայտ պատճառներով 2019 թվականի հետ համեմատած 2020 թվականի բյուջեում նվազեցվել են, որն անթույլատրելի է, եթե չկան բավարար հիմքեր, իսկ եթե կան, ապա անհրաժեշտ է մեզ ներկայացնել այդ հիմնավորումները:

Ամփոփելով զեկույցս՝ առաջարկվում է մարզի բոլոր համայնքների ղեկավարներին այսուհետև ամենաբարձր մակարդակի աշխատանքներն իրականացնել սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ:

Ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ՝ **Գ.Գուլյան**

ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ Կոտայքի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի մասին

Ներկայացվում են 2019թ.-ի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզում Կառավարության և համայնքների համաֆինանսավորմամբ իրականացված սուբվենցիոն ծրագրերի արդյունքները, դրանց ընթացքում ի հայտ եկած խնդիրները, թերությունները, ինչպես նաև 2020թ.ին նախատեսված ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվելիք քայլերը:

2019թ.-ի ընթացքում Կոտայքի մարզի 32 համայնքների կողմից ներկայացվել և միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության են արժանացել 54 ծրագրեր: Ծրագերի մեծ մասը հաջողվել է ավարտին հասցնել 2019-ի ընթացքում, իսկ 8 ամենածավալուն աշխատանքներ ենթադրող ծրագրերի մասով աշխատանքների ավարտը հետաձգվել է մինչև 2020 թվականի օգոստոսի 1, ինչը ՀՀ մարզերի մեջ լավագույն ցուցանիշներից է: Իրականացված ծրագրերի ընդհանուր արժեքը կազում էր շուրջ 2մլրդ դրամ, որից կեսը համայնքերի ներդրումն է:

Իրականացված ծրագրերի ծավալը, ոլորտային բաշխվածությունը և ընդգրկումը բացառիկ է նախորդ տարիների հետ համեմատության մեջ: Իրականացված ծրագրերը ընդգրկում են համայնքների ինչպես սոցիալական այնպես էլ տնտեսական ենթակառուցվածքների զարգացման կենսական կարևորության ուղղություններ՝ մասնավորապես 2019թ-ի ընթացքում միայն սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են 18 ճանապարհաշինական ծրագրեր, մանկապարտեզների, մշակույթի և արվեստի տների կառուցման և հիմնանորոգման 16 ծրագրեր, որոնց մեջ հատուկ ուշադրության են արժանի 3 նոր մանկապարտեզների կառուցման ծրագրերը մարզի Գեղաշեն, Արամուս և Վերին Պտղնի համայնքներում, ևս 15 ծրագիր նպատակաուղղված էր ջրագծերի, կոյուղագծերի, գազատարների և արտաքին լուսավորության համակարգերի կառուցմանն ու հիմնանորոգմանը:

Այսպիսով, ամփոփելով 2019թ.-ի ընթացքում իրականացված ծրագրերը, կարող ենք փաստել, որ սուբվենցիոն ծրագրերը կայացել են որպես մարզի և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործիք, ինչի շնորհիվ լուծում են գտնում համայնքներում տասնամյակներով կուտակված բազմաթիվ խնդիրներ՝ միաժամանակ նպաստելով համայնքների կարողությունների մեծացմանն ու սեփական եկամուտների արդյունավետ և

նպատակային կառավարմանը, դրանք ուղղելով կապիտալ աշխատանքների իրականացմանը:

Մեկնարկել է 2020թ.-ի սուբվենցիոն հայտերի ներկայացման գործընթացը, և այս առիթով անհրաժեշտ է ընդգծել գործընթացի պատշաճ կազմակերպման և նախորդ տարի ծրագրերի իրականացման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների բացառման անհրաժեշտությունը:

- Առաջին հերթին կարևորագույն նախապայման է ներկայացվող ծրագրերի ճիշտ պլանավորման և ակնկալվող ֆինանսական միջոցների համապատասխանության ապահովումը: Այս նպատակով արդեն իսկ հասցրել ենք հանդիպել բոլոր համայնքների ղեկավարների հետ և նախանշել իրականացվող ծրագրերի շրջանակը, հաշվի առնելով թե մարզի և թե համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ուղղությունները, ինչպես նաև հնարավորինս բացառելով այնպիսի ծրագրերի ներկայացումը, որոնց իրականացման հետ կապված կարող են առաջանալ ֆինանսական և տեխնիկական բնույթի կանխատեսելի խնդիրներ: Մեր քննարկումների արդյունքում այս պահին ունենք շուրջ 100 ծրագրեր համաձայնեցված մարզի 38 համայնքների հետ, շուրջ 6մլրդ դրամ նախնական բյուջեով: Այսինքն, անցած տարվա համեմատությամբ նախատեսում ենք եռապատկել իրականացվող աշխատանքների ծավալները:
- Սուբվենցիաների տրամադրման կարգով նախատեսված ժամկետների խստիվ պահպանումը ևս կարևոր նախապայման է: Ինչպես գիտեք անցած տարեվերջին ընդունվել է կարգում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ կառավարության որոշում, ըստ որի համայնքների կողմից ծրագրային հայտերի և նախագծման աշխատանքների տեխնիկական բնութագրի մարզպետարան ներկայացման ժամկետ է սահմանվել փետրվարի 2-ը, իսկ նախագծանախահաշվային փաստաթղթերի ներկայացման ժամկետ ապրիլի 27-ը:
- Հաջորդ կարևորագույն խնդիրը նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և բուն շինարարական աշխատանքների ճիշտ կազմակերպում է և պատշաճ վերահսկողության սահմանումը նախագծող և կապալառու կազմակերպությունների նկատմամբ: Գաղտնիք չէ, որ ոլորտում առկա որոշակի բացի պատճառով հաճախ ունենում ենք պատկեր, երբ պատվիրված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերում ի հայտ են գալիս խնդիրներ որոնք բարդացնում են շինարարական աշխատանքների ընթացքը, ավելացնում են նախապես պլանավորված ծախսերն ու մեծացնում աշխատանքների իրականացման ժամանակը: Իրենց հերթին կապալառու կազմակերպությունների կողմից հաճախակի են աշխատանքների անհիմն ձգձգման և ոչ բավարար որակով

իրականացման դեպքերը: Նմանատիպ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է որպեսզի պատվիրատուն՝ տվյալ դեպքում համայնքը խիստ վերահսկողություն սահմանի նախագծման տեխնիկական բնութագրի կազմումից մինչև շինարարական օբյեկտի ընդունման ակտի ստորագրման պահը ներգրավված բոլոր կողմերի աշխատանքների նկատմամբ: Հարկ եմ համարում ևս մեկ անգամ վերահաստատել, որ ինչպես 2019-ին այպես էլ 2020-ին անորակ և թերություններով իրականացված շինարարական աշխատանքների դիմաց պետական բյուջեից վճարումներ չեն իրականացվելու, իսկ անպատասխանատու կապալառուները զրկվելու են գնումների գործընթացներին հետագա մասնակցության իրավունքից:

Վերը նշված բոլոր կետերի ապահովման համար համայնքները՝ որպես պատվիրատու կրում են ուղղակի պատասխանատվություն: Ներկայացված ծրագրերի չիրականացման կամ թերի իրականացման պարագայում կքննարկվի տվյալ համայնքների կողմից հաջորդ տարիներին ներկայացված սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակահարմարությունը: Ամբողջ պրոցեսի ընթացքում մարզպետարանի կողմից համայնքներին կտրամադրվի անհրաժեշտ մասնագիտական և խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև կապահովվի համայնքների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև սերտ համագործակցություն:

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ՝ _____ Ա. Ավետիսյան